Հայ Օգնության Միություն

Երեխաները Հայաստանի մանկատներում և հատուկ դպրոցներում.
Թրաֆիքինգի և շահագործման հավանական զոհեր

ԵՐԵՎԱՆ – 2005

Սույն հրատարակության մեջ ամփոփված են հեղինակների տեսակետները, մեկնաբանություններն ու եզրակացությունները, որոնք կարող են չհամընկնել ՀՀ-ում ԱՄՆ դեսպանատան, ԵԱՀԿ-ի կամ ԵԱՀԿ Երևանի գրասենյակի տեսակետների հետ:

ԵՐԱԽՏԻՔԻ ԽՈՍՔ

Սույն ուսումնասիրությունն իրականացվել է Հայաստանում ԱՄՆ դեսպանատան ֆինանսական աջակցությամբ: Հայ Օգնության Միությունը փորձագիտական աջակցություն է ստացել Եվրոպայի անվտանգության և համագործակցության կազմակերպության (ԵԱՀԿ) Երևանի գրասենյակի կողմից:

Հատուկ երախտագիտություն ենք հայտնում ՀՀ-ում ԱՄՆ դեսպանատան Թմրամիջոցների դեմ պայքարի և իրավապահ համագործակցության բաժնի ծրագրի նախկին համակարգող Անժելա Լեֆեյվին և քաղաքական հարցերի մասնագետ Անահիտ Մարտիրոսյանին այս նախագծի մտահղացման, ինչպես նաեւ աջակցության համար: Անչափ շնորհակալ ենք էդ Շեքին՝ ԱՄՆ դեսպանատան Թմրամիջոցների դեմ պայքարի և իրավապահ համագործակցության բաժնի նախկին ղեկավարին, նույն բաժնի ծրագրի օգնական Դավիթ Խաչատուրյանին, ԵԱՀԿ Երևանի գրասենյակի ժողովրդավարության զարգացման ծրագրի ղեկավար Բլանկա Հանչիլովային և ԵԱՀԿ փորձագետ Յենս Մատտեսին:

ՀԱՊԱՎՈՒՄՆԵՐ

ՀՕՄ	Հայ օգնության միություն
ԵԻԿ	Երեխայի իրավունքների կոնվենցիա
ՀԿ	Հայաստանի կառավարություն
ԵԱՀԿ	Եվրոպայի անվտանգության և համագործակցության կազմակերպություն

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

ԵՐԱԽՏԻՔԻ ԽՈՍՔ 3

ՀԱՊԱՎՈՒՄՆԵՐ 4

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ 5

ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՌՈՏ ԲՆՈՒԹԱԳԻՐԸ 7

ՀԻՄՆԱԿԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԸ 7

Մանկատների ու հատուկ դպրոցների երեխաների համար առկա վտանգները 7

Վերապատրաստման ու խորհրդատվական կարիքներ 10

Առաջարկություններ 11

ՎԵՐԼՈՒԾԱԿԱՆ ՆՅՈՒԹԻ ԾԱՆՈԹՈՒԹՅՈՒՆ ԵՎ ԿԱՌՈՒՑՎԱԾՔ 13

ԳԼՈՒԽ I. ՕՐԵՆՍԴՐԱԿԱՆ ԵՎ ԻՐԱՎԱԿԱՆ ԴԱՇՏԻ ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆ 18

1.1 Երեխայի պաշտպանությունը և կառույցների համակարգումը Հայաստանում 18

1.2 Հայաստանի իրավական դաշտում երեխայի պաշտպանությունը թրաֆիքինգի ենթարկվելուց 20

1.2.1 Թրաֆիքինգի դեմ պայքարը 21

1.2.2 Վկայի պաշտպանությունը 22

1.2.3 Սեռական շահագործումը, բռնությունը 24

1.2.4 Աշխատանքային շահագործումը 26

1.2.5 Որդեգրում 26

ԳԼՈՒԽ II. ՔԱՆԱԿԱԿԱՆ ՍՈՑԻՈԼՈԳԻԱԿԱՆ ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՈՒԹՅՈՒՆ 30

2.1 Մեթոդաբանությունը և հարցվողների վերաբերյալ տեղեկատվությունը 30

2.1.1 Ուսումնասիրության մեթոդաբանությունը 30

2.1.2 Հարցվածների սոցիալ-ժողովրդագրական բնութագրիչները 33

2.2 Ռիսկի գործոնները մանկատան և հատուկ տիպի դպրոցի աշակերտների համար 36

2.2.1 Սոցիալ-տնտեսական գործոնները 36

2.2.2 Դժվարություններ առօրյա կյանքում 38

2.2.3 Հանրապետությունից մեկնելուն նպաստող գործոնները (push factors) 39

2.3 Թրաֆիքինգի վերաբերյալ իրազեկության աստիճանի գնահատումը 41

2.3.1 Ընդհանուր իրազեկություն 42

2.3.2 Մասնավոր դեպքեր 43

2.3.3 Թրաֆիքինգի հետևանքների գնահատումը 46

2.3.4 Թրաֆիքինգի վերաբերյալ գիտելիքների գնահատումը 46

2.3.5 Թրաֆիքինգի վերաբերյալ Հայաստանի Հանրապետությունում գործող օրենքների մասին իրազեկությունը 48

2.3.6 Թրաֆիքինգի վերաբերյալ իրազեկության և գիտելիքների ձևավորման աղբյուրների գնահատումը 49

2.4 Միգրացիոն կողմնորոշումները և թրաֆիքինգի ենթարկվելու ռիսկի բացահայտումը 52

2.4.1 Միգրացիոն կողմնորոշումները 52

2.4.2 Արտասահման մեկնելու համար տեղեկատվական աղբյուրները 53

2.5 Թրաֆիքինգի կանխարգելման ուսուցման և խորհրդատվական կարիքների գնահատումը 57

2.6 Հայաստանից մեկնած անձանց մասին տեղեկատվություն 60

ԳԼՈՒԽ 3. ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԱՌԱՋԱՐԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ 62

3.1 Եզրակացություններ 62

3.2 Առաջարկություններ 63

3.2.1 Իրազեկության բարձրացում 63

3.2.2 Կանխարգելման միջոցառումներ 64

3.2.3 Միջգերատեսչական մարմիններ 65

3.2.4 Իրավական բարեփոխումներ 66

Հավելված Ա. Ընտրանք 68

ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՌՈՏ ԲՆՈՒԹԱԳԻՐԸ

2004թ. նոյեմբերից մինչև 2005թ. ապրիլ ընկած ժամանակահատվածում Հայ Օգնության Միությունն իրականացրեց սոցիոլոգիական մի հետազոտություն, որի նպատակն էր պարզել թրաֆիքինգի վերաբերյալ իրազեկության մակարդակը Հայաստանում հատուկ դպրոցների ու մանկատների երեխաների և այդ հաստատություններն ավարտածների շրջանում, ինչպես նաև բացահայտել այս երեխաների հետ տեղի ունեցած թրաֆիքինգի դեպքերը: Նման հետազոտությունը պետք է նպաստի անհրաժեշտ քաղաքականության մշակմանը և կանխարգելման հատուկ ծրագրերի իրականացմանը:

Կիրառվել է ստանդարտացված հարցազրույցի մեթոդը՝ տվյալներ ստանալու.

ա/ մանկատների և հատուկ դպրոցների երեխաներից, բ/ Հայաստանում այդ հաստատությունների շրջանավարտներից, գ/ այդ հաստատությունների այն շրջանավարտներից, ովքեր արտագաղթել են, դ/ մանկատների ու հատուկ դպրոցների երեխաների ընտանիքների անդամներից, ե/ այդ հաստատություններում աշխատող մանկավարժներից, զ/ թրաֆիքինգի հիմնահարցերով զբաղվող փորձագետներից: Հարցազրույցներն իրականացվել են մասնակիցների ներկայացուցչական ընտրանքի մեթոդով Երևանում, Շիրակում, Լոռիում, Սյունիքում և Գեղարքունիքում:

ՀԻՄՆԱԿԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԸ

Մանկատների ու հատուկ դպրոցների երեխաների համար առկա վտանգները

- Ըստ հետազոտության արդյունքների՝ հատուկ հաստատություններում պահվող երեխաների ու շրջանավարտների ընտանիքների մեծ մասը գտնվում է նյութական ծանր կամ ճգնաժամային վիճակում: Հարցման մասնակիցների նշված երկու խմբերում մեկ երրորդից ավելին հայտնել է, որ իրենց ընտանեկան եկամուտը չի բավարարում նույնիսկ հիմնական սննդամթերք գնելու համար:
- Բացի նյութական դժվարություններից, ընտանիքները ամենօրյա հիմնախնդիրներ ունեն զբաղվածության, բնակարանային և առողջապահական հարցերում: Ի լրումն սրա, հարցմանը մասնակցած շատ երեխաներ հոգեբանական լուրջ խնդիրներ ունեն, ինչպիսիք են ապագայի նկատմամբ անորոշությունը և ընտանեկան ջերմության պակասը:
- Հարցվողները, որպես կանոն, համաձայնել են, որ այս հաստատությունների երեխաներն ու շրջանավարտները հասարակության առավել անպաշտպան ու կարիքավոր խմբերի թվին են պատկանում: Հետազոտվող երեխաներն ու

շրջանավարտները իրենց խոցելի լինելն ապացուցող չորս հիմնական պատճառ են բերում. նյութական անապահովություն, ընտանեկան անբարենպաստ իրավիճակ, հոգեբանական և իրավական անպաշտպանություն:

- Հարցման մասնակիցների ավելի քան կեսը հայտնել է, թե լսել է պատմություններ թրաֆիքինգի և դրա կազմակերպիչների մասին: Այդուհանդերձ, հարցվողների մի ստվար մասը երբեք չի լսել թրաֆիքինգ երևույթի մասին: Ինչպես և սպասվում էր, իրազեկության մակարդակն ամենաբարձրն էր հարցման մասնակից փորձագետների ու մանկավարժների, իսկ ամենացածրը՝ նշված հաստատությունների սաների շրջանում:
- Յուրաքանչյուր խմբում հարցման մասնակիցների 5-10 տոկոսը հայտնել է, թե անձամբ ճանաչում է թրաֆիքինգի ենթարկված անձանց: Պատմություններից մի քանիսը վերաբերում էին հարցման մասնակիցների հարազատներին /մայր, հայր, քույր, եղբայր, քեռի/:
- Ընդհանուր առմամբ հարցվողները ներկայացրեցին 93 դեպք, երբ այս հաստատությունների սաներին կամ շրջանավարտներին ուղարկել են արտերկիր՝ շահութաբեր աշխատանքի, իսկ իրականում նրանք ստիպված են եղել կատարել այլ աշխատանք կամ էլ չեն վճարվել կատարածի դիմաց:
- Բացի աշխատանքային շահագործումից, հարցման մասնակիցները նշել են նաև սեռական շահագործման մասին: Արաբական Միացյալ Էմիրությունները, Թուրքիան, Ռուսաստանի Դաշնությունը, ԱՄՆ-ը և Հունաստանը ներկայացվել են որպես ժամանման երկրներ, որտեղ շրջանավարտները ենթարկվել են ֆիզիկական կամ սեռական շահագործման:
- Միևնույն ժամանակ, հարցման արդյունքները թույլ են տալիս եզրակացնելու, որ այս հաստատությունների սաներն ու շրջանավարտները չունեն թրաֆիքինգի մասին հիմնավոր գիտելիքներ և տեղեկություններ:
- Մասնավորապես, երեխաների միայն 6,7 տոկոսն է նշել, թե իրենք բավարար գիտելիքներ ունեն՝ անհրաժեշտ խորհուրդներ տալու նրանց, ում շահութաբեր աշխատանք են խոստացել արտերկրում: Ավելին, թրաֆիքինգի վերաբերյալ ՀՀ օրենսդրության մասին հարցին ի պատասխան՝ երեխաների ու շրջանավարտների 88 տոկոսն ընդունել է, թե բոլորովին անտեղյակ է այդ օրենսդրությանը:
- Այս արդյունքները զարմանալի չեն, եթե նկատի ունենանք, որ հատուկ դպրոցների ու մանկատների երեխաների ընտանիքներն ու մանկավարժները նույնպես հայտնել են, որ թրաֆիքինգի մասին ընդհանրապես, և

թրաֆիքինգի վերաբերյալ օրենսդրության մասին մասնավորապես, գիտելիքների պակաս ունեն:

- Իրազեկության պակասի պատճառով ընտանիքների, մանկավարժների ու խնամողների դերը թրաֆիքինգին առնչվող հիմնախնդիրների մասին իրազեկության բարձրացման հարցում սահմանափակ է: Ընտանիքների մեծ մասում թրաֆիքինգի խնդիրն ընդհանրապես չի քննարկվում: Մանկավարժներն ու խնամակալները նույնպես, պարզվում է, քիչ քննարկումներ են նախաձեռնում այս թեմայով:
- Ինչ վերաբերում է թրաֆիքինգի մասին տեղեկատվության հիմնական աղբյուրներին, հատուկ դպրոցների ու մանկատների երեխաներն ու շրջանավարտները, որպես կանոն, այն ստանում են հեռուստատեսային հաղորդումներից, իրենց ընկերներից ու ծանոթներից: Հարցման մասնակիցներից շատ քչերն են ստանում թրաֆիքինգին վերաբերող տեղեկատվություն պետական պաշտոնյաներից, հասարակական կազմակերպություններից, ռադիոհաղորդումներից, թերթերից, ինտերնետ-կայքերից և թեմատիկ բրոշյուրներից:
- Իրենց ապագա ծրագրերի մասին հարցին հատուկ դպրոցների ու մանկատների սաների ու շրջանավարտների որոշակի տոկոսը /համապատասխանաբար 9,1 և 20,4/ նշել է, թե մտածել է Հայաստանից արտագաղթելու մասին: Խոսելով Հայաստանից մեկնելու հիմնական պատճառների մասին, հարցվողներն ընդգծել են երկրում աշխատատեղերի պակասը, արտերկրում լավ վարձատրվող աշխատանք գտնելու հնարավորությունը, հեռանկարների անորոշությունը և իրավական ոչ բավարար պաշտպանվածությունը:
- Հարցման մասնակից երեխաների ու շրջանավարտների մեծ մասը աշխատանք գտնելու ցանկությունը նշել է որպես արտագաղթի հիմնական պատճառ: Այս հաստատությունների սաների մեկ քառորդը ցանկանում է ուսում ստանալ արտերկրում: Այլ պատճառներից են արտերկրում մշտական կեցության կարգավիճակ ստանալը և ամուսնությունը:
- Հայաստանից մեկնել ցանկացող հարցման մասնակիցների համար տեղեկատվության ստացման կարևոր աղբյուր են ծանոթները, ընկերներն ու հարևանները: Հարցվողների մեծ մասը նշել է, որ արտերկրում աշխատող անձինք արտասահման մեկնելու հարցերում տեղեկատվության իրենց հիմնական աղբյուրն են:
- Ինչ վերաբերում է ժամանման երկրներին, հարցման մասնակիցները ծրագրում են մեկնել Ռուսաստանի Դաշնություն, ԱՄՆ, Ֆրանսիա, Գերմանիա, Լեհաստան, Հոլանդիա և Հունաստան: Հետաքրքիր է, որ թեև նրանք ցանկանում են մեկնել վերոնշյալ երկրներ, սակայն այդ

հաստատությունների սաների կեսից ավելին և շրջանավարտների գրեթե մեկ երրորդը գաղափար չունեն նշված երկրների միգրացիոն ռեժիմների մասին: Սրա մասին է վկայում այն, որ հատուկ դպրոցների ու մանկատների սաների 34,5 և շրջանավարտների 42,4 տոկոսը պատրաստ են վստահել իրենց անձնագրերը և այլ փաստաթղթեր այն անձանց, ովքեր կկազմակերպեն իրենց ճամփորդությունն արտերկիր:

Վերապատրաստման ու խորհրդատվական կարիքներ

- Թրաֆիքինգի վերաբերյալ տեղեկատվության պահանջի մասին հարցին մանկավարժների ու խնամակալների 87,2 և ընտանիքի անդամների 53,3 տոկոսը նշել են, որ հիմնախնդրի նկատմամբ մեծ հետաքրքրություն կա:
- Քիչ թվով մանկավարժներ ու խնամակալներ են մասնակցել թրաֆիքինգի դեմ պայքարին վերաբերող վերապատրաստումների: 17,6 տոկոսը մասնակցել է քննարկումների, և 26,4 տոկոսը այս խնդրի վերաբերյալ ֆիլմեր է դիտել: Հարցման մասնակիցների կարծիքով ներգրավվածության համեմատաբար ցածր մակարդակը պայմանավորված է այս խնդրի շուրջ կազմակերպվող միջոցառումների սակավությամբ:
- Հարցման մասնակիցների մեծամասնությունն ընդգծել է վերապատրաստումների ու խորհրդատվության ավելացման անհրաժեշտությունը: Սա կարևոր քայլ կլինի մանկատներ և հատուկ դպրոցներ հաճախող սաների և այդ հաստատություններն ավարտածների շրջանում թրաֆիքինգի կանխարգելման ուղղությամբ:
- Ավելին, այս հաստատությունների՝ հարցման մասնակից սաների 88,5 և շրջանավարտների 74 տոկոսը ցանկություն են հայտնել մասնակցելու թրաֆիքինգի վերաբերյալ միջոցառումների և քննարկումների: Երեխաների ծնողների ու մանկավարժների ճնշող մեծամասնությունը նույնպես ցանկություն է հայտնել մասնակցելու թրաֆիքինգի հարցերով միջոցառումների ու քննարկումների:
- Թրաֆիքինգի կանխարգելմանն ուղղված հետագա հնարավոր քայլերի մասին առաջարկությունների թվում մասնակիցներն առաջնային են համարել իրազեկության բարձրացումն ու տեղեկատվությունը: Հիշյալ հաստատությունների սաները կարևորել են դպրոցներում այս թեմայով դասընթացները, հեռուստահաղորդումներն ու բաց քննարկումները: Երեխաների ծնողները, հաստատությունների շրջանավարտներն ու մանկավարժները նշում են հեռուստածրագրերի ու մամուլի, ինչպես նաև տեղեկատվական գրքույկների ու բրոշյուրների տարածման կարևորությունը:

Առաջարկություններ

Ելնելով ուսումնասիրության արդյունքներից՝ կատարվել են հետևյալ առաջարկությունները՝ ուղղված մանկատների ու հատուկ դպրոցների սաների թրաֆիքինգը կանխելուն:

1. Իրազեկության բարձրացում

Իրազեկության բարձրացումը դպրոցական ծրագրում

ՀՀ կրթության և գիտության նախարարության որոշմամբ հատուկ դպրոցներում ու մանկատներում պետք է իրականացվեն իրազեկության բարձրացման համապարփակ ծրագրեր: Այլ քայլերի հետ մեկտեղ թրաֆիքինգի խնդիրը հարկ է ընդգրկել Մարդու իրավունքների դասընթացի դպրոցական ծրագրում՝ որպես առանձին թեմա: Թրաֆիքինգի դեմ պայքարի հարցը մանկավարժների հատուկ ուշադրությանը պետք է արժանացնել՝ կազմակերպելով վերապատրաստման դասընթացներ, սեմինարներ ու քննարկումներ: Այս հաստատությունների գրադարանները պետք է ապահովել թրաֆիքինգի դեմ պայքարի մասին գրականությամբ և նյութերով:

Իրազեկության ընդհանուր բարձրացումը

Կառավարությունը պետք է ձեռնարկի իրազեկության համապարփակ քարոզարշավ, նպատակ ունենալով տեղեկացնել թիրախ խմբին և ողջ հասարակությանը թրաֆիքինգի, ինչպես նաև դրա պատճառների ու հետևանքների մասին: Մամուլի դերն այս հարցում կարևոր է, մասնավորապես հեռուստատեսությանը, որը, ըստ հարցման արդյունքների, հետազոտության մասնակիցների շրջանում վստահելի տեղեկատվության առաջնային աղբյուր է: Քանի որ ՀՀ մարզերում տեխնիկական պատճառներով երևանյան հեռուստաալիքների լսարանը փոքր է, քարոզարշավը պետք է համագործակցի տեղական / մարզային հեռուստաալիքների հետ:

2. Պաշտպանության հատուկ միջոցառումներ

Սոցիալական պաշտպանության ընդհանուր միջոցառումները

Կառավարությունը պետք է բազմապատկի ջանքերը՝ ստեղծելու սոցիալական պաշտպանության արդյունավետ ու գործուն համակարգ, որը կաշխատի նաև հատուկ դպրոցների ու մանկատների սաների ու շրջանավարտների համար: Սա, այլ նախաձեռնությունների հետ մեկտեղ, կներառի համապատասխան քայլեր Հայաստանում թրաֆիքինգի հիմնական պատճառներից մեկը՝ երեխաների շահագործումը կանխելու ուղղությամբ: Լրացուցիչ քայլեր պետք է ձեռնարկվեն նվաճումներն ամրապնդելու և հնարավոր որևէ հետընթաց կանխելու համար:

Շրջանավարտների զբաղվածության հարցը

Կառավարությունը պետք է հետևողական աշխատանք ծավալի մանկատների և հատուկ դպրոցների շրջանավարտների շրջանում գործազրկությունը կրճատելու ուղղությամբ և աշխատատեղեր ստեղծի նրանց համար: Հայաստանում գործող առաջատար գործատուները պետք է խրախուսվեն՝ շրջանավարտներին զբաղվածությամբ ապահովելու և նրանց համար վերապատրաստման հնարավորություններ ստեղծելու համար: Դա հնարավոր կլինի մանկատների հետ պայմանագրեր կնքելու և տարեկան քվոտաներ սահմանելու միջոցով:

Շրջանավարտների բնակարանային հարցերի լուծումը

Կառավարությունը պետք է օրենսդրական դրույթներ որդեգրի և գործնական քայլեր ձեռնարկի՝ մանկատների շրջանավարտների բնակարանային խնդիրները լուծելու համար: Այս նպատակով պետք է հատկացվեն բավարար ֆինանսական միջոցներ:

Երեխաների խնամք իրականացնող հաստատությունների վերահսկումը

Կառավարությունը պետք է մշակի վերահսկման համակարգ՝ մանկատներ և հատուկ դպրոցներ կանոնավոր և պարտադիր հսկողական այցեր իրականացնելու համար, նպատակ ունենալով վերահսկել, թե ինչքանով է ապահովվում ընդունված նորմերի պահպանումը, ինչպես նաև կօժանդակեն հաստատություններից երեխաների դուրսբերման գործընթացի /դեինստիտուցիոնալիզացիայի/ իրականացմանը:

Հասարակական կազմակերպությունների /ՀԿ/ ծրագրերի ֆինանսավորումը

Կառավարությունը պետք է աջակցի ՀԿ-ներին՝ տրամադրելով նրանց դրամաշնորհներ և ֆինանսավորում՝ թրաֆիքինգի կանխարգելմանն ու զոհերի օգնությանն ուղղված ծրագրերի իրականացման համար, մասնավորապես, երբ դա վերաբերում է հասարակական խնամքի կարիք ունեցող երեխաների պաշտպանությանը:

Կազմակերպությունների հակաթրաֆիքինգային ցանցերը

Կառավարությունը պետք է նպաստի և աջակցի միջգործակալական ցանցերի ստեղծմանը՝ առողջապահության, հոգեբանական ծառայությունների, սոցիալական աշխատանքի ու իրավական ոլորտներում ներդաշնակ ու համակարգված գործողություններ իրականացնելու միջոցով: Պետք է ստեղծվեն թեմատիկ աշխատախմբեր, որոնք կանդրադառնան թրաֆիքինգի դեմ պայքարի որոշակի ոլորտների, ինչպիսիք են կանխարգելումը, պաշտպանությունը և զոհերին տրամադրվող օժանդակությունը: Այս աշխատախմբերը պարբերաբար կայցելեն մանկատներ և հատուկ դպրոցներ:

Բռնությունների կանխարգելման և թրաֆիքինգի դեմ պայքարի հարցերով վերապատրաստումներ

Կառավարությունը պետք է մասնագիտական վերապատրաստում կազմակերպի բուժաշխատողների, հոգեբանների, սոցիալական աշխատողների և իրավապահ մարմինների ներկայացուցիչների համար՝ նրանց մասնագիտական ունակությունները բարելավելու, երեխաների շահագործման և նրանց դեմ կատարվող բռնությունների դեմ հավուր պատշաճի պայքարելու համար: Այս մասնագետները պետք է նաև պատրաստված լինեն նման բռնությունների զոհերին որոշակի օժանդակություն տրամադրելու գործում: Թրաֆիքինգի զոհերի աջակցությունը պետք է վերապատրաստման ծրագրի առաջնահերթ հարցերից լինի: Վերապատրաստումը պետք է հիմնվի մարդու իրավունքների պաշտպանության սկզբունքի վրա, տեղեկացնի մասնակիցներին զոհերի իրավունքների մասին և կարևորի նրանց նկատմամբ խտրականության բացառումը:

ՎԵՐԼՈՒԾԱԿԱՆ ՆՅՈՒԹԻ ԾԱՆՈԹՈՒԹՅՈՒՆ ԵՒ ԿԱՌՈՒՑՎԱԾՔ

1990-ական թվականներից ի վեր Հայաստանում տեղի ունեցող ժողովրդավարական գործընթացները և երկրի ինտեգրումը միջազգային հանրությանը բավական հեշտացրել են հանրապետությունից մարդկանց ազատ տեղաշարժը: Անկախ փորձագետների գնահատմամբ վերջին 15 տարիների ընթացքում Հայաստանից ինչպես օրինական, այնպես էլ անօրինական ճանապարհով արտագաղթել է 760 հազարից մինչև 1մլն մարդ: Անկանոն միգրացիայի հետևանքով Հայաստանի Հանրապետությունը վերածվել է ոչ միայն կանանց, այլև երեխաների անօրինական առևտրի՝ թրաֆիքինգի ելքի և որոշ չափով էլ տարանցիկ երկրի:

Հայաստանից մարդկանց անօրինական փոխադրումներին խթանող կարևոր գործոն շարունակում են մնալ հանրապետության սոցիալ-տնտեսական անբարենպաստ պայմանները, ինչպես նաև աղքատության, գործազրկության մեծ մասշտաբները: Դրանք դրդում են մարդկանց «դրսում» փնտրելու բարեկեցիկ կյանք, հաջող ամուսնություն, բարձր վարձատրվող աշխատանք, որի հետևանքով էլ նրանք երբեմն անսպասելիորեն հայտնվում են այնպիսի իրադրություններում, ինչպիսիք են բռնի սեռական շահագործումը, ստրկական աշխատանքը, դաժան ծեծը, տեղաշարժերի սահմանափակումը և այլն:

Թրաֆիքինգը վերջին տարիներին Հայաստանում, ըստ որոշ հետազոտությունների, աճի միտում ունի[1], և այդ երևույթի վերաբերյալ դեռևս

[1] «Կանանց և երեխաների անօրինական փոխադրումները Հայաստանի Հանրապետությունից», ուսումնասիրություն, սեպտեմբեր, 2001թ., Միգրացիայի միջազգային կազմակերպություն:

գոյություն ունեն ոչ ամբողջական պաշտոնական վիճակագրական տվյալներ, ինչպես նաև խնդիրը մեկնաբանելու հարցում առկա է փորձառության որոշ պակաս: Արձանագրվել են դեպքեր, երբ օգտվելով Հայաստանի մանկատներում եւ հատուկ դպրոցներում երեխաների խոցելի վիճակից՝ այդ երեխաները ենթարկվել են սեռական շահագործման Միացյալ Արաբական էմիրություններում:

Թրաֆիքինգի մասին բնակչության պատկերացումները հաճախ նույնացվում են մարմնավաճառության և սեռական շահագործման երևույթի հետ, մինչդեռ իրականում այն ունի դրսևորման այնպիսի ձևեր, ինչպիսիք են մարդկանց հարկադիր աշխատանքը կամ ծառայությունները, ստրկությունը կամ նմանատիպ պրակտիկան, օրգանների հեռացումը:

Սույն հետազոտությունը մեկ անգամ ևս հիմնավորեց այն ենթադրությունը, որ Հայաստանում թրաֆիքինգի ռիսկը հատկապես բարձր է բնակչության անապահով խավերի, այդ թվում՝ մանկատների և հատուկ դպրոցների սաների շրջանում: Չնայած պետության կողմից նրանց կարիքների բարելավմանն ուղղված սոցիալական քաղաքականության որոշ քայլերի[2], այնուհանդերձ, նրանց կենսամակարդակը դեռևս շարունակում է մնալ շատ ցածր, դեռևս գոյություն ունեն չլուծված մի շարք հիմնախնդիրներ:

Հայ Օգնության Միությունը (այսուհետև՝ ՀՕՄ) իր երկարամյա գործունեության ընթացքում Հայաստանի Հանրապետության մարզերում սոցիալական բնույթի ծրագրեր իրագործելիս պարբերաբար բախվել է բազմաթիվ փաստերի, երբ մանկատան և հատուկ հաստատության երեխաները մանկական մարմնավաճառության, աշխատանքի շահագործման նպատակով, որդեգրման կամ կեղծ ամուսնության պատրվակով ենթարկվել են անօրինական փոխադրումների և վաճառքի:

Հայաստանում ստեղծված նման իրավիճակը ՀՕՄ-ը պայմանավորում է նաև այն հանգամանքով, որ հանրապետությունում գործող մանկատների և հատուկ դպրոցների երեխաների և դրանց շրջանավարտների շրջանում դեռևս բացակայում են թրաֆիքինգի վերաբերյալ համապարփակ սոցիոլոգիական հետազոտական տվյալները:

ՀՕՄ-ը այս հետազոտության միջոցով նպատակ է հետապնդում ստանալ հավաստի տվյալներ այդ հաստատությունների երեխաների և շրջանավարտների շրջանում թրաֆիքինգի վերաբերյալ իրազեկության աստիճանի, թրաֆիքինգի դեպքերի և այդ ոլորտում առկա հիմնախնդիրների ու կարիքների մասին:

---

[2] Հայաստանի Հանրապետությունում 2002թ. հոկտեմբերի 31–ից գործում է «Առանց ծնողական խնամքի մնացած երեխաների սոցիալական պաշտպանվածության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքը, որով սահմանվել են առանց ծնողական խնամքի մնացած երեխաների սոցիալական պաշտպանության իրավական, տնտեսական, կազմակերպական հիմքերը, նպատակները, սկզբունքները, ձևերը:

Անցկացված սոցիոլոգիական հետազոտության արդյունքները բնակչության այդ խմբի վերաբերյալ ներառում են բազմաթիվ գործոնային և ցուցանիշային համալիր տվյալներ, որոնց վերլուծությունը, ակնկալում ենք, որ կարող է օգնել Հայաստանում թրաֆիքինգի հետագա կանխարգելմանը, նպատակային ծրագրերի իրականացմանը և քաղաքականության մշակմանը:

Այս հետազոտության նպատակն էր սոցիոլոգիական հետազոտության միջոցով մանկատներում և հատուկ դպրոցներում սովորող և այդ հաստատությունները ավարտած երիտասարդների շրջանում բացահայտել թրաֆիքինգի վերաբերյալ նրանց իրազեկության աստիճանը, դեպքերը, ինչը հետագայում կարող է նպաստել Հայաստանում թրաֆիքինգի կանխարգելման համար նպատակային ծրագրերի իրականացմանը և քաղաքականության մշակմանը:

Հետազոտության նպատակից ելնելով՝ հետազոտական խմբի առջև դրված էին հետևյալ խնդիրները՝

- բացահայտել մանկատներում և հատուկ դպրոցներում սովորող և այդ հաստատությունները ավարտած երիտասարդների շրջանում թրաֆիքինգի վերաբերյալ իրազեկության աստիճանը,
- բացահայտել մանկատներում և հատուկ դպրոցներում սովորող և այդ հաստատությունները ավարտած երիտասարդների շրջանում թրաֆիքինգի իրազեկության աղբյուրները, իրավական գիտելիքների մակարդակը,
- բացահայտել մանկատներում և հատուկ դպրոցներում սովորող և այդ հաստատությունները ավարտած երիտասարդների շրջանում թրաֆիքինգի դեպքերը.
- կանխատեսել նրանց հետագա միգրացիոն վարքագիծը և թրաֆիքինգի ենթարկվելու ռիսկերը.
- բացահայտել թրաֆիքինգի հետագա կանխարգելման վերաբերյալ նրանց ուսուցողական և խորհրդատվական կարիքները:

Հետազոտությունում, որպես ուսումնասիրության առարկա, հանդես են գալիս մանկատներում և հատուկ դպրոցներում սովորող և այդ հաստատությունները ավարտած 14-25 տարեկան երեխաներն ու երիտասարդները: Հետազոտության առարկան ընդգրկում է նաև մանկատան և հատուկ դպրոցների հետ անմիջական առնչություն ունեցող բնակչության հետևյալ խմբերը. մանկատան և հատուկ դպրոց հաճախող երեխաների ընտանիքներ, այդ հաստատություններում աշխատող ուսուցիչներ:

Մանկատների և հատուկ դպրոցների երեխաների շրջանում նրանց ընտանիքները և այդ հաստատությունների ուսուցիչները դիտարկվել են որպես

թրաֆիքինգի հետագա կանխարգելման համար կարծիք ձևավորողներ: Հետազոտությունում գնահատվել են նաև նրանց կարիքները:

Հետազոտության համար կարևոր խումբ են համարվում նաև այդ հաստատության այն շրջանավարտները, ովքեր մեկնել են հանրապետությունից և գտնվում են Հունաստանում և ԱՄՆ-ում: ՀՕՄ-ը այդ երկրներում գտնվող իր մասնաճյուղերի, դեսպանատների և եկեղեցու միջոցով փորձել է նրանց շրջանում բացահայտել թրաֆիքինգի դեպքեր:

Այսպիսով, հետազոտությունն իրականացվել է բնակչության հետևյալ խմբերի շրջանում.

- մանկատների և հատուկ դպրոցների աշակերտները,
- մանկատների և հատուկ դպրոցների շրջանավարտները,
- մանկատների և հատուկ դպրոցների շրջանավարտները, ովքեր մեկնել են հանրապետությունից,
- մանկատների և հատուկ դպրոցների աշակերտների ընտանիքները,
- մանկատներում և հատուկ դպրոցներում աշխատող ուսուցիչները,
- թրաֆիքինգի խնդրի հետ առնչվող փորձագետները:

Հարկ ենք համարում նշել, որ հետազոտության մեջ «թրաֆիքինգ» հասկացության համար հիմք է ընդունված Պալերմոյի արձանագրությունում տեղ գտած սահմանումը, այն է՝

«ՄԻԱՎՈՐՎԱԾ ԱԶԳԵՐԻ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ԱՆԴՐԱԶԳԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՎԱԾ ՀԱՆՑԱՎՈՐՈՒԹՅԱՆ ԴԵՄ ԿՈՆՎԵՆՑԻԱՆ ԼՐԱՑՆՈՂ՝

ՄԱՐԴԿԱՆՑ, ՀԱՏԿԱՊԵՍ ԿԱՆԱՆՑ ԵՎ ԵՐԵԽԱՆԵՐԻ ԱՌԵՎՏՐԻ ԿԱՆԽԱՐԳԵԼՄԱՆ, ԱՐԳԵԼՄԱՆ ԵՎ ՊԱՏԺԻ ՄԱՍԻՆ ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ»

ՀՈԴՎԱԾ 3. ՀԱՍԿԱՑՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ՝ սույն Արձանագրության նպատակների համար. ա) «մարդկանց առևտուր»՝ թրաֆիքինգ, նշանակում է՝ շահագործման նպատակով իրականացվող մարդկանց հավաքագրելը, տեղափոխելը, փոխանցելը, թաքցնելը կամ ստանալը ուժի սպառնալիքով կամ դրա կամ հարկադրանքի այլ միջոցների կիրառման, առևանգման, խարդախության, խաբեության, իշխանությունը կամ վիճակի խոցելիությունը չարաշահելու կամ ուրիշ անձի կողմից վերահսկվող անձի համաձայնությունն ստանալու համար վճարումների կամ շահերի ձևով կաշառելու ճանապարհով: Շահագործումը նվազագույնը ներառում է այլ անձանց մարմնավաճառության շահագործումը կամ սեռական շահագործման այլ ձևերը, հարկադիր աշխատանքը կամ ծառայությունները, ստրկությունը կամ ստրկությանը համանման սովորույթները, անազատ վիճակը կամ մարմնի մասերը կորզելը. բ) մարդկանց առևտրի զոհի համաձայնությունը այնպիսի պլանավորված

շահագործմանը, որի մասին խոսվում է սույն հոդվածի «ա» ենթակետում, հաշվի չի առնվում, եթե օգտագործվել է «ա» ենթակետում նշված ներգործության միջոցներից որևէ մեկը. գ) շահագործման նպատակով երեխա հավաքագրելը, տեղափոխելը, փոխանցելը, թաքցնելը կամ ստանալը համարվում է մարդկանց առևտուր նույնիսկ այն դեպքում, եթե դրանք կապված չեն սույն հոդվածի «ա» ենթակետում նշված ներգործության միջոցներից որևէ մեկի կիրառման հետ. դ) «երեխա» նշանակում է ցանկացած անձ, որի 18 տարին չի լրացել (Տե'ս: www.Antitrafficking.am):

Առանձնահատուկ ուշադրությունը մանկատների և հատուկ դպրոցների աշակերտների խմբին դեռեւս չի նշանակում, որ այն ռիսկի միակ խումբն է, եւ լրացուցիչ ուսումնասիրությունների կարիք կա պարզելու այլ խմբերի, ներառյալ վերոնշյալ հաստատություններում չգտնվող, ֆիզիկական եւ հոգեկան արատներ ունեցող երեխաների, ռիսկի գործոնները եւ տեղեկացնելու երեխաներին առնչվող կանխարգելման միջոցառումների մասին:

Ուսումնասիրությունը նաեւ կոչված չէր պարզաբանելու ՁԻԱՀ-ՄԻԱՎ-ի և սեռավարակների հետ կապված ռիսկի գործոնների վերաբերյալ տեղեկատվությունը մանկատների և հատուկ դպրոցների աշակերտների շրջանում:

Վերլուծական նյութը բաղկացած է 3 մասից.

«ԳԼՈՒԽ 1. Օրենսդրական եւ իրավական դաշտի վերլուծություն»-ը ներառում է (1.1) Երեխայի պաշտպանությունը եւ կառույցների համակարգումը Հայաստանում եւ (1.2) Հայաստանի իրավական դաշտում երեխայի պաշտպանությունը թրաֆիքինգի ենթարկվելուց:

«ԳԼՈՒԽ 2. Քանակական սոցիոլոգիական ուսումնասիրություն»-ը նախ ներկայացնում է (2.1) Մեթոդաբանությունը եւ հարցվողների վերաբերյալ տեղեկատվությունը եւ այնուհետեւ վերլուծում է ուսումնասիրության 4 հիմնական ասպարեզները, որոնք են՝ (2.2) Ռիսկի գործոնները մանկատան եւ հատուկ դպրոցի աշակերտների համար, (2.3) Թրաֆիքինգի վերաբերյալ իրազեկության աստիճանի գնահատումը, (2.4) Միգրացիոն կողմնորոշումները և թրաֆիքինգի ենթարկվելու ռիսկի բացահայտումը, (2.5) Թրաֆիքինգի կանխարգելման ուսուցման և խորհրդատվական կարիքների գնահատումը, եւ (2.6) Հայաստանից մեկնած անձանց մասին տեղեկատվություն:

«ԳԼՈՒԽ 3. Եզրակացություններ եւ առաջարկություններ» բաժնում՝ հիմնվելով Գլուխ 1 եւ 2-ի վրա, տրվում են համապատասխան առաջարկություններ:

ԳԼՈՒԽ Ի. ՕՐԵՆՍԴՐԱԿԱՆ ԵՎ ԻՐԱՎԱԿԱՆ ԴԱՇՏԻ ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆ

1.1 Երեխայի պաշտպանությունը և կառույցների համակարգումը Հայաստանում

Հայաստանում երեխայի պաշտպանության վերաբերյալ իրավիճակը բնորոշվում է որոշ գործոններով, որոնք խոչընդոտում են նրանց նկատմամբ թրաֆիքինգի կանխարգելման գործընթացը:

Հայաստանում դեռևս չկա ինտեգրացված համակարգ, որը կօժանդակեր երեխայի պաշտպանության ու խնամքի հարցերով կառավարական կառույցների աշխատանքի համակարգմանը: Տեղական մակարդակով կան երեք տիպի հանձնախմբեր, որ կոչված են զբաղվելու երեխայի ապահովության և պաշտպանության հարցերով: Դրանք են՝ Անչափահասների հարցերով զբաղվող հանձնախմբերը, Խնամակալության և հոգաբարձության հարցերով հանձնաժողովները և Բժշկահոգեբանամանկավարժական բազմաճյուղ (մուլտիդիսցիպլինար) հանձնաժողովները: Սրանցից միայն Խնամակալության և հոգաբարձության հանձնաժողովներն են իրոք գործող կառույցներ, որոնց գործունեության իրավական դաշտը ամրագրված է կառավարական համապատասխան որոշմամբ[3]:

Երեխաների նկատմամբ վատ վերաբերմունքի ու բռնությունների դեմ պայքարելը առաջնահերթ խնդիր է թրաֆիքինգի կանխարգելման գործում, քանի որ չարաշահման և անուշադրության դրսևորումները կարող են մեծացնել երեխայի՝ թրաֆիքինգի զոհ դառնալու հնարավորությունը: Ներկայումս Հայաստանում չկա որևէ կառույց, որ կոչված լինի համակարգված ձևով պայքարելու երեխայի շահագործման կամ նրա նկատմամբ վատ վերաբերմունքի դրսևորման դեմ:

Ի պատասխան վերոհիշյալ մտահոգող խնդիրների՝ ստեղծվեց կառավարական հատուկ աշխատախումբ: 2003թ. այն մշակեց հայեցակարգ և ընդունեց երեխայի շահագործման և առանց խնամքի թողնելու դեպքերի կանխարգելման, գրանցման, ուղղորդման և դրանց դեմ ձեռնարկվող միջոցառումների վերաբերյալ կարգը: Սրանով առաջին անգամ Հայաստանում ներդրվեց երեխայի շահագործման մասին որոշակի մասնագետների կողմից պարտադիր տեղեկացման պրակտիկան: Այն նաև նախատեսում է դատական գործընթացի մեջ չներգրավվելու պայմանները (այսինքն՝ տեղեկացնողը պատասխանատվություն չի կրում, եթե տեղեկացրել է բարեխղճորեն), որոնք համապատասխանում են միջազգային նորմերին:

---

[3] «Խնամակալության և հոգաբարձության հանձնաժողովների կանոնադրությունը հաստատելու մասին», ՀՀ կառավարության որոշում, թիվ 111, 13 մարտի, 2000 թ.:

Մտահոգության մեկ այլ ոլորտ է առանց ծնողի խնամքի մնացած երեխաներին որոշակի հարկի տակ հավաքելու շարունակվող պրակտիկան: Անցումային շրջանի բարեփոխումներով պայմանավորված հսկայական փոփոխությունները Հայաստանում առաջացնում էին սոցիալական նոր խնդիրներ:

Այդ հաստատությունների մեծ մասը հիմնվել է խորհրդային կարգերի օրոք՝ որբացած երեխաների կամ հատուկ բժշկական, կրթական կամ հոգեբանական օգնության կարիք ունեցող երեխաների համար՝ խիստ հստակ գործառույթներով: Հայ իրականության մեջ ազգային սովորույթների և ամուր ազգակցական կապերի շնորհիվ դարեր շարունակ ծնողազուրկ երեխաներին վերցնում և անմիջական խնամքը իրականացնում էին նրանց մերձավոր (տատ-պապ, հորեղբայրներ-մորեղբայրներ, հորաքույրեր-մորաքույրեր) և նույնիսկ հեռավոր ազգականները: Այդ երեխաներին նրանք ծայրահեղ դեպքերում են հանձնել մանկատներ:

Երկրի դերի նվազումը՝ որպես մատակարարող, և սոցիալական բևեռացումը հանգեցրին «սոցիալական ծնողազուրկների» թվի աճին, և, միևնույն ժամանակ, երկրի ներսում նվազեց որդեգրումների «պահանջը»: Ներկա սոցիալ-տնտեսական պայմանների հետևանքով այդ հաստատություններ են ընդունվում շատ երեխաներ, որոնք չեն համապատասխանում այդ հաստատությունների ընդունելության նախնական չափանիշներին:

1998 թվականին Հայաստանում գործում էր 59 հաստատություն, որից 25-ը՝ Երևանում, 34-ը՝ մարզերում, որտեղ գրանցված էր 10,000[4] երեխա: Յոթ մանկատներում կատարված ուսումնասիրությունից պարզվել է, որ երկկողմանի ծնողազուրկ երեխաների թվաքանակը կազմել է այդ մանկատներում ապրող երեխաների ընդամենը 24%-ը, 41%-ը ուներ մեկ ծնող, իսկ 35%-ը՝ երկու ծնող: Վերջին խմբի քառորդ մասը ամուսնալուծված ծնողների երեխաներ էին:

Սոցիալական ծանր պայմանները, մեկ ծնողի բացակայությունը կամ երկար տարիներ այդ հաստատություններում ապրելը խոր ազդեցություն են ունենում երեխաների, նրանց սոցիալականացման գործընթացի, վարքագծային նորմերի և արժեքային համակարգի վրա: Այդ հաստատությունները արտաքին աշխարհի հետ հաղորդակցման և տեղեկատվության ապահովման տեսանկյունից դեռևս համարվում են «փակ» ինստիտուցիոնալ կառույցներ: Տնտեսական անկումը Հայաստանում հանգեցրել է նաև սոցիալական ծառայությունների կրճատմանը, որի հետևանքով հաստատություններ ավարտած երեխաները երբեմն մնում են անօթևան կամ վերադառնալով ընտանիք՝ դառնում են ծանր բեռ:

---

[4] Տե՛ս Հայաստանի երեխաների և կանանց իրադրության վերլուծություն, 1998, Եր., 1998թ., էջ 112-116:

Այս իրավիճակից մտահոգ՝ կառավարությունն արձագանքեց այնպիսի միջոցառումների ձեռնարկմամբ, որոնք նպատակ ունեին քաջալերելու հաստատություններից երեխաների դուրսբերումը՝ ներկայացնելով խնամքի այլընտրանքային ձևեր, որը հանգեցրեց «Երեխաների խնամքի և պաշտպանության հարցերով զբաղվող հաստատությունների բարեփոխման պետական մարտավարական ծրագրի» մշակմանը: Այլընտրանքային այս քաղաքականությունն արտացոլված է «Երեխայի իրավունքների մասին» 2003 - 2015 թթ. Ազգային ծրագրում: Սակայն, ինչպես նշված է Երեխայի իրավունքների հարցերով հանձնաժողովի՝ Հայաստանի երկրորդ պարբերական զեկույցի ավարտական նկատառումներում, հատուկ հաստատություններում գտնվող երեխաների թիվը դեռևս բարձր է:

Լուրջ խնդիր է օրենքում այնպիսի դրույթների բացակայությունը, որոնք կնախատեսեին հաստատությունների պարտադիր պարբերական վերահսկողություն: Ընդունվելու դեպքում նման դրույթները, այլ հարցերի հետ մեկտեղ, կնպաստեին թրաֆիքինգի դեմ ուղղված ջանքերի հաջողությանը՝ պաշտպանելով երեխաներին հաստատություններում նրանց իրավունքի խախտումներից:

Մեկ այլ առաջնահերթություն է սոցիալական ապահովության ընդհանուր բարելավումը, քանի որ հաստատություններից դուրս գալուց հետո սոցիալական բավարար պաշտպանվածության պակասը մեծացնում է երեխաների խոցելիությունը և կարող է նրանց թրաֆիքինգի ենթարկվելու պատճառ դառնալ: Հատուկ հաստատություններում գտնվող երեխաների սոցիալական պաշտպանության մասին օրինագիծը, որ ներկայումս մշակվում է, հատուկ նպատակ ունի բարելավելու սոցիալական պաշտպանությունը և նպաստելու հաստատություններից դուրս գալուց հետո նրանց ինտեգրմանը:

1.2 Հայաստանի իրավական դաշտում երեխայի պաշտպանությունը թրաֆիքինգի ենթարկվելուց

Հայաստանը անդամակցում է թրաֆիքինգից և շահագործումից երեխաների պաշտպանության հետ կապված որոշ միջազգային արձանագրությունների:

Հայաստանը Երեխայի իրավունքների կոնվենցիայի (ԵԻԿ) անդամ երկիր է և ստորագրել, սակայն դեռ չի վավերացրել ԵԻԿ-ի կամընտիր՝ Երեխաների առևտրի, Երեխայի մարմնավաճառության և Մանկական պոռնոգրաֆիայի մասին, ինչպես նաև Երեխաներին զինված հակամարտությունների մեջ ներգրավելու մասին արձանագրությունները: Հայաստանը չի վավերացրել Աշխատանքի միջազգային կազմակերպության (ԱՄԿ) 105-րդ (Ստիպողական աշխատանքի վերացման մասին) և 108-րդ (Երեխայի աշխատանքի վատթարագույն ձևերի վերացման մասին) կոնվենցիաները: Չի վավերացվել նաև Ստրկության, ստրուկների առևտրի,

ստրկությանը նմանվող գործողությունների և դրանք կիրառող կառույցների վերացման մասին ՄԱԿ-ի լրացուցիչ կոնվենցիան:

1.2.1 Թրաֆիքինգի դեմ պայքարը

Հայաստանը 2003 թ. մարտին վավերացրել է ՄԱԿ-ի՝ Անդրազգային կազմակերպված հանցավորության դեմ կոնվենցիան և դրան կից՝ Մարդկանց, հատկապես կանանց և երեխաների թրաֆիքինգի կանխարգելման, դրա դեմ պայքարի և պատժի մասին արձանագրությունը (այսուհետև՝ Պալերմոյի արձանագրություն):

2003թ. ապրիլին Հայաստանի Հանրապետության Ազգային ժողովն ընդունեց Քրեական նոր օրենսգիրքը[5], ամրագրելով մարդկանց թրաֆիքինգը որպես քրեական հանցանք, որն առավել ծանր է համարվում, եթե կատարվում է անչափահասի նկատմամբ: Քրեական օրենսգրքում հետագայում կատարվել են մի քանի փոփոխություններ (ներառյալ՝ մարդկանց թրաֆիքինգի հարցերի վերաբերյալ), սակայն այս փոփոխություններից ոչ մեկը չի անդրադարձել հենց անչափահասների թրաֆիքինգին:

ՀՀ քրեական օրենսգրքում փոփոխություններից հետո թրաֆիքինգը սահմանվում է հետևյալ կերպ. «Մարդկանց առևտուրը, այսինքն՝ մարդուն գնելը կամ վաճառելը, հավաքագրելը, փոխադրելը, հանձնելը, թաքցնելը կամ ստանալը, որը կատարվել է նրան պոռնկության կամ սեռական այլ շահագործման, հարկադիր աշխատանքի կամ ծառայությունների, ստրկության կամ ստրկությանը հավասարազոր վիճակի հասցնելու կամ կախյալ վիճակի մեջ դնելու կամ մարդու օրգանները կամ հյուսվածքները վերցնելու նպատակով[6]»: Այս սահմանումը, համեմատած նախորդի հետ[7], բարեփոխված է, քանի որ ներառում է թրաֆիքինգի ավելի մեծ թվով նպատակներ, ինչպես, օրինակ, օրգանների հեռացումը: Այնտեղ բացակայում է նաև «շահադիտական նպատակներով» բառակապակցությունը: Նախորդ սահմանման հետ կապված խնդիրն այն էր, որ չէր խոսվում, թե արդյոք թրաֆիքինգը նույն կերպ պետք է սահմանվի, եթե այն կատարվում է անչափահասի նկատմամբ: Քրեական օրենսգրքի փոփոխությունները Պալերմոյի արձանագրության հետ լուծել են այս անհամապատասխանությունը՝ վերացնելով խաբեության, ուժի կամ այլ հարկադրանքի առկայության անհրաժեշտությունը

---

[5] Ուժի մեջ է 2003թ. օգոստոսի 1-ից:

[6] ՀՀ քրեական օրենսգիրք, հոդված 132:

[7] Սեռական շահագործման կամ ստիպողական աշխատանքի նպատակով մարդկանց հավաքագրում, տեղափոխում, փոխադրում, պահպանում կամ ստացում հարկադրանքի կամ ուժի գործադրմամբ, խարդախության, խաբեության, կախյալ վիճակից օգտվելու, շանտաժի, սեփականության ավերման կամ վնասման սպառնալիքի ճանապարհով, եթե դրանք արվել են շահադիտական նպատակներով:

(Հայաստանի դեպքում ոչ միայն այն պարագայում, երբ դա վերաբերում է երեխային, այլև ընդհանրապես, որը նշանակում է Հայաստանում թրաֆիքինգի փաստի ապացուցման առավել դյուրացում):

Ողջունելի է, որ մարդկանց թրաֆիքինգի սահմանումը, որը տրված է Քրեական օրենսգրքի 132-րդ հոդվածում, չի շեշտում սահմանի անցումը որպես հանցագործության անհրաժեշտ տարր, ուստի հնարավոր է դարձնում ներքին թրաֆիքինգի դեպքերի հետաքննությունը, թեև պետք է նշել, որ Հայաստանում դեռևս պաշտոնապես չի արձանագրվել ներքին թրաֆիքինգի դեպք:

Հայաստանի քրեական օրենսդրությունը դեռևս լրացումների կարիք ունի՝ արտացոլելու մարդկանց թրաֆիքինգի ենթարկելու բնույթը՝ որպես ցածր ռիսկի գործոն պարունակող հանցագործություն, որը բերում է խոշոր գումարներ: Էական է, որ օրենսգիրքը նախատեսում է արդյունավետ և համապատասխան պատժամիջոցներ թրաֆիքինգի այն կազմակերպիչների համար, ովքեր գործում են կազմակերպված քրեական ցանցերի շրջանակներում: Թեև շատ ողջունելի է, որ օրենսգիրքը սահմանում է թրաֆիքինգը որպես ծանր հանցագործություն, երբ կատարվում է կազմակերպված քրեական խմբի կողմից, այնուամենայնիվ, նախատեսվող պատիժը (5-ից 8 տարի ազատազրկում), ամենայն հավանականությամբ, խոչընդոտող ազդեցություն չի ունենա այն կազմակերպված խմբերի համար, որոնք ներգրավված են քրեական այնպիսի շահութաբեր գործունեության մեջ, ինչպիսին է մարդկանց թրաֆիքինգը (համեմատության համար. 266-րդ հոդվածի 3-րդ պարբերությամբ թմրանյութերի և հոգեմետ նյութերի ապօրինի շրջանառությունը վաճառքի նպատակով կազմակերպված քրեական խմբի կողմից կատարվելու դեպքում նախատեսվում է 7-ից 15 տարվա ազատազրկում՝ ունեցվածքի բռնագրավումով կամ առանց դրա):

1.2.2 Վկայի պաշտպանությունը

Ըստ Հայաստանի Հանրապետության օրենսդրության՝ 16 և 16-ից բարձր տարիք ունեցող վկաները, եթե նրանք Հայաստանի Հանրապետության քաղաքացիներ են, կարող են վկայության կանչվել, իսկ վկայություն տալուց հրաժարվելը կամ սուտ վկայություն տալը ենթադրում է քրեական պատասխանատվություն: ՀՀ օրենսդրությունը արտոնություններ է նախատեսում կատարված հանցագործությունից հետո ինքնաբացահայտման և ընտանիքի անդամների բացահայտման դեպքերում: Մինչև 16 տարեկան երեխան (Հայաստանում քրեական պատասխանատվություն կրելու տարիքը ընդհանրապես՝ 16, որոշ դեպքերում՝ 14 տարեկանն է) չի կարող դատարան կանչվել վկայությունից հրաժարվելու դեպքում: Հայաստանի քրեական դատավարական օրենսդրությունը մեծ կարևորություն է տալիս մեղադրյալի և վկայի առերեսմանը, ինչպես նաև չի թույլատրում անանուն վկայի ցուցմունք կամ մեղադրյալի բացակայությամբ տրվող

ցուցմունք: Միակ բացառությունը թույլատրվում է մինչև 16 տարեկան վկաների պարագայում: Վերջիններս կարող են ցուցմունք տալ մեղադրյալի բացակայությամբ, «եթե կա գործի հանգամանքների ամբողջական, համապարփակ և օբյեկտիվ քննության անհրաժեշտություն[8]»:

ՀՀ օրենսդրությամբ կան ընթացակարգային պաշտպանական սահմանափակ միջոցներ: Քրեական դատավարության մասին օրենսգրքի 99-րդ հոդվածը նախատեսում է 2 միջոց, որոնք կարող են համարվել ընթացակարգային: Դրանք են՝ ա) դատարանի կամ դատախազի կողմից պաշտոնական նախազգուշացում՝ պաշտպանյալին սպառնալու դեպքում քրեական պատասխանատվության մասին, բ) պաշտպանյալի վերաբերյալ տեղեկատվության հասանելիության սահմանափակում:

Նախազգուշացման արդյունավետությունը՝ որպես վկայի ահաբեկման դեմ ձեռնարկվող քայլ, ընդհանրապես, և թրաֆիքինգի ու կազմակերպված հանցավորության դեպքում մասնավորապես, մեծապես վիճարկվում է: Հնարավորություն է տրվում նաև անցկացնելու դռնփակ դատավարություն, եթե դա պահանջվում է՝ ելնելով հասարակական բարքերից, հասարակական կարգից և պետական շահերից[9]: Քրեական դատավարության մասին օրենսգրքի 99-րդ հոդվածը նախատեսում է ոչ ընթացակարգային պաշտպանական միջոցառումներ, ինչպիսիք են անձի և/կամ նրա ընտանիքի անդամների ֆիզիկական պաշտպանությունը և նրանց ժամանակավոր տեղավորումն այլ վայրում: Ի լրումն դրա՝ վկայի ցուցմունքներին խոչընդոտելը և վկային ահաբեկելու գործողությունները դիտվում են որպես քրեական հանցանք[10], որը կարող է համարվել վկայի պաշտպանության ոչ ընթացակարգային միջոց: Հայաստանի օրենսդրությունը չի տալիս «վտանգված/տուժած (vulnerable) վկայի» սահմանում, ոչ էլ որևէ հատուկ չափանիշ է նախատեսում այսպես կոչված «վկայի պաշտպանության ծրագրի» ընդունման համար: Բացառությամբ Քրեական դատավարության մասին օրենսգրքի այն դրույթի, ըստ որի քրեական հետաքննության մարմինն է որոշում, թե արդյոք պե՞տք է ձեռնարկվեն պաշտպանական միջոցառումներ[11], որևէ այլ հղում օրենսգրքում չկա այն մասին, թե ով է պատասխանատու ոչ ընթացակարգային միջոցառումների իրականացման համար: Հայաստանը չունի վկայի պաշտպանության մասին օրենք, որը հենց այն փաստաթուղթը կլիներ, ուր կամփոփվեր ոչ ընթացակարգային միջոցառումների, ներառյալ՝ վկայի պաշտպանության ծրագրի իրականացման դաշտը: Վկայի

---

[8] ՀՀ քրեական դատավարության մասին օրենսգիրք, հոդված 15, պարբ. 3:

[9] Նույն տեղում, հոդված 16:

[10] ՀՀ քրեական օրենսգիրք, հոդվածներ 337 և 340:

[11] Նույն տեղում, հոդված 98:

պաշտպանության ոչ ընթացակարգային միջոցառումների արդյունավետ կիրարկմանը խանգարում են նաև դրանց իրականացման միջոցների թանկ լինելը և բյուջետային համապատասխան բաշխումների բացակայությունը: Ինչ վերաբերում է թրաֆիքինգի զոհերի/վկաների համար օգնության մատչելիությանը, Հայաստանում դեռևս չի մշակվել սխեմա, որը ելնի թրաֆիքինգի զոհերի կարիքներից և շաղկապի վկայի պաշտպանությունն ու զոհին օգնություն տրամադրելը (որպես օրինակ կարող է ծառայել Գերմանիայի «համագործակցության հայեցակարգը»): ՀՀ օրենսդրությունը բավարար չափով չի անդրադառնում վկաների պաշտպանությանը և պետք է վերանայվի՝ ապահովելու համար պատշաճ երաշխիքներ ահաբեկման, վրեժի և զոհին վերստին տառապանքների ենթարկելու դեմ:

Օրենսդիրը, որպես տարբերակ, կարող է քննարկել վկայի պաշտպանության մասին օրենսդրական առանձին ակտի ավելացումը օրենսգրքին: Այս պարագայում օրենսգիրքը կարող է նախատեսել զուտ ընթացակարգային միջոցառումներ վկայի պաշտպանության համար, իսկ վկայի պաշտպանության մասին օրենքը կվերաբերի ոչ ընթացակարգային հարցերին: Կարևոր է, որ ապագա օրենսդրական դաշտը նախատեսի համապատասխան գերատեսչությունների հստակ սահմանված դերը վկայի պաշտպանության իրականացման գործում: Վկայի պաշտպանության մասին դրույթները պետք է իրագործելի լինեն ծախսվելիք գումարների առումով և հիմնված լինեն բյուջետային բավարար և ուղղակի հատկացումների վրա: Առաջարկվում է, որ Կառավարությունը առավել մեծ ուշադրություն դարձնի վկայի պաշտպանության հարցերում միջազգային համագործակցությանը: Մասնավորապես, երկկողմ համագործակցությունը Ռուսաստանի կամ ԱՊՀ այլ խոշոր երկրի հետ կարող է ճիշտ ուղղություն հաղորդել գործընթացին, եթե վկաների բնակության վայրի փոփոխությունը Հայաստանը չի համարում իրականանալի տարբերակ՝ երկրի փոքր տարածքի պատճառով: Վկայի պաշտպանության հարցերով առկա համագործակցության համաձայնագիրը բալթյան պետությունների միջև այս առումով լավ օրինակ կարող է լինել:

1.2.3 Սեռական շահագործումը, բռնությունը

ՀՀ քրեական օրենսգիրքը պատժելի է համարում երեխաների ներգրավումը քրեական գործողություններում[12] և հատկապես պոռնոգրաֆիայի արտադրության կամ տարածման դեպքում[13], ինչպես նաև երեխայի ներգրավումը

[12] ՀՀ քրեական օրենսգիրք, հոդված 165:

[13] ՀՀ քրեական օրենսգիրք, հոդված 166 (Երեխայի ներգրավումը հակասոցիալական գործողություններում):

մարմնավաճառության մեջ[14] և երեխայի օգտագործումը պոռնոգրաֆիկ արտադրության մեջ[15]: Հայաստանը միացել է Երեխաների վաճառքի, երեխայի մարմնավաճառության և մանկական պոռնոգրաֆիայի մասին Երեխայի իրավունքների կոնվենցիայի կամընտիր արձանագրությանը, և դրա վավերացումը դեռևս սպասվում է:

Տեղական օրենսդրությամբ երեխաների պաշտպանությունը սեռական շահագործումից և նրանց նկատմամբ սեռական բնույթի գործողություններից ամրագրված է հիմնականում Քրեական օրենսգրքում, որը պատիժ է նախատեսում բռնաբարության[16], սեռական բռնության[17], անչափահասի բռնաբարության[18], անառակաբարո գործողությունների դեպքում ակնհայտ 16 տարին չլրացած անձի նկատմամբ[19], մարմնավաճառության մեջ ներգրավման[20], կավատության[21], պոռնոգրաֆիկ նյութերի անօրինական արտադրության, վաճառքի և տարածման դեպքերում[22]:

Բռնաբարությունը, սեռական բռնությունը և մարմնավաճառության մեջ ներգրավումը, երբ ներգրավված անձն անչափահաս է, ինչպես նաև մանկական պոռնոգրաֆիայի արտադրությունը, վաճառքը և տարածումը պատժվում են որպես ծանր հանցանքներ:

Հայաստանը միացել է նաև Կիբեռհանցագործության մասին եվրոպական կոնվենցիային[23]: Մանկական պոռնոգրաֆիայի ստեղծումը համակարգչային ցանցով տարածման նպատակով, ինչպես նաև մանկական պոռնոգրաֆիայի տարածումն ու փոխանցումը համակարգչային ցանցով քրեականացվում են որպես ծանր հանցանքներ[24]: Սակայն, ինչ վերաբերում է մանկական պոռնոգրաֆիայի

---

[14] Նույն տեղում, հոդված 261, պարբ. 2:

[15] Նույն տեղում, հոդված 263, պարբ. 3:

[16] ՀՀ քրեական օրենսգիրք, հոդված 138: Բռնաբարության սահմանումը Հայաստանի քրեական օրենսդրության մեջ սեռային առումով չեզոք չէ և չի վերաբերում միևնույն սեռի ներկայացուցչի կողմից բռնությանը: Միևնույն սեռի ներկայացուցչի կատարած գործողությունները և սեռական այլ բռնություններ, որոնք արտացոլված չեն բռնաբարության մասին տեղական սահմանման մեջ, պատժվում են Քրեական օրենսգրքի 139-րդ հոդվածով (սեռական բռնություն):

[17] Նույն տեղում, հոդված 139:

[18] Նույն տեղում, հոդված 141: Հայաստանում երկու սեռերի համար էլ ամուսնական տարիքը 16-ն է:

[19] Նույն տեղում , հոդված 142:

[20] Նույն տեղում, հոդված 261:

[21]Նույն տեղում , հոդված 262:

[22]Նույն տեղում , հոդված 263:

[23] Դեռևս ուժի մեջ չէ:

[24] ՀՀ քրեական օրենսգիրք, հոդված 263, պարբ. 2:

սպառողներին, Քրեական օրենսգիրքը չի նախատեսում պատիժներ մանկական պոռնոգրաֆիա հայթայթելու դեպքում կամ այն համակարգչում կամ էլ համակարգչային տվյալների կրիչներով պահելու համար:

Օրենքը նաև չի սահմանում, թե ինչ է իրենից ներկայացնում մանկական պոռնոգրաֆիան: Մանկական պոռնոգրաֆիայի մասին Քրեական օրենսգրքի համապատասխան դրույթների լեզուն այնպիսին է, որ դրանք կարող են մեկնաբանվել որպես դրույթներ, որոնք սակայն չեն ներառում այն նյութերը, որ պատկերում են մի անձ, որն անչափահաս է թվում, կամ էլ համակարգչով ստեղծված երեխայի պատկերներ:[25]

1.2.4 Աշխատանքային շահագործումը

Հայաստանը դեռ չի վավերացրել ՄԱԿ-ի 105-րդ (Ստիպողական աշխատանքի վերացման մասին) և 182-րդ (Երեխաների աշխատանքի վատթարագույն ձևերի վերացման մասին) կոնվենցիաները:

ՀՀ աշխատանքային օրենսգիրքն արգելում է անչափահասների աշխատանքը «ֆիզիկապես դժվարին, վտանգավոր կամ վնասակար պայմաններում և ստորգետնյա վայրերում»[26]: Միևնույն ժամանակ, օրենսգիրքը չի ներկայացնում արգելվող վտանգավոր աշխատանքների ցուցակը: Չի դրվում նաև արգելք այն աշխատանքների վրա, որոնք խանգարում են անչափահասի կրթությանը կամ վնասակար են նրա ֆիզիկական, մտավոր, հոգևոր, բարոյական կամ սոցիալական զարգացման առումով: Սա կհամապատասխաներ Երեխայի իրավունքների մասին կոնվենցիայի դրույթներին[27]:

1.2.5 Որդեգրում

Հայաստանում որդեգրման իրավական հիմքը տրված է Ամուսնության և ընտանիքի օրենսգրքում, Քաղաքացիական օրենսգրքում և մի շարք կառավարական որոշումներում, մասնավորապես, 2000թ. փետրվարի 12-ի թիվ 64

---

[25] Հարկ է նշել, սակայն, որ Կիբեռհանցագործության մասին կոնվենցիան երկրներին իրավունք է վերապահում չկիրարկել իր դրույթները, որոնք վերաբերում են մանկական պոռնոգրաֆիայի հայթայթմանը և պահպանմանը, ինչպես նաև մանկական պոռնոգրաֆիայի սահմանումից հանել «անչափահաս թվացող անձի պատկերում» հատվածը (Կիբեռհանցագործության մասին կոնվենցիա, հոդված 9, պարբ. 4):

[26] ՀՀ աշխատանքային օրենսգիրք, հոդված 200:

[27] Հոդված 32 («Անդամ երկրները ճանաչում են երեխայի այն իրավունքը, ըստ որի՝ նա պետք է պաշտպանվի տնտեսական շահագործումից և այնպիսի աշխատանք կատարելուց, որը կարող է լինել վտանգավոր կամ խանգարել երեխայի կրթությանը, կամ էլ վնասակար լինել երեխայի առողջության կամ ֆիզիկական, մտավոր, հոգևոր, բարոյական կամ սոցիալական զարգացման համար»):

որոշման մեջ, որը կանոնակարգում է որդեգրման ընթացակարգը: Անօրինական որդեգրումը չի համարվում քրեական հանցանք:

Օրենքը որոշակիորեն նշում է, որ որդեգրումը բխում է երեխայի շահերից[28]: Սակայն օրենքի և դրա կիրարկմանն ուղղված կանոնակարգերի մանրամասն վերլուծությունը բացահայտում է դրա առավել մեծ ուղղվածությունը դեպի ծնողի, քան դեպի երեխայի շահերը: Երեխաներին ուղղակիորեն ընտրում են հավանական որդեգրող ծնողները, փոխանակ ծնողներն ընտրվեն փորձված մասնագետների մանրամասն լուրջ ուսումնասիրությունից հետո:

«Երեխայի որդեգրման ընթացակարգի ընդունման մասին» ՀՀ կառավարության որոշման մեջ ասվում է, որ եթե տվյալ երեխայի որդեգրման ցանկություն է հայտնվել, և որպես հավանական որդեգրող ծնող է գրանցվել մեկից ավելի անձ, առաջնությունը կտրվի այն հավանական որդեգրող ծնողին, ով առաջինն է գրանցվել և չի փոխել իր որոշումը որդեգրման մասին[29]: Հայաստանի առկա օրենսդրության որևէ դրույթ չի պահանջում, որպեսզի արտերկրյա որդեգրումը քննարկվի միայն այն դեպքում, երբ երեխայի համար հնարավոր չէ համապատասխան որդեգրում ապահովել հանրապետության ներսում:

Համաձայն Հայաստանի Հանրապետության օրենսդրության՝ երեխան կարող է որդեգրվել, եթե «նրա ծնողներից մեկը կամ երկու ծնողներն էլ՝ ա) անառողջ են, բ) զրկված են ծնողական իրավունքից, գ) դատարանի կողմից անգործունակ են ճանաչվել, դ) գրավոր համաձայնություն են տվել որդեգրման համար, ե) վերջին մեկ տարվա ընթացքում երեխայից առանձին են ապրել, և, անտեսելով որդեգրման և խնամակալության մարմինների նախազգուշացումը, շարունակում են հոգ չտանել երեխայի մասին և չեն կատարում իրենց ծնողական պարտականությունները, զ/ այլ դեպքերում, որոնց մասին նշվում է ՀՀ օրենսդրության մեջ»[30]:

Փողոցի երեխայի որդեգրման մասին որոշումը կայացնում է ոստիկանությունը ոչ շուտ, քան երեք ամիս անց այն բանից հետո, երբ երեխան ճանաչվում է որպես փողոցի երեխա:

Տասը և ավելի տարեկան երեխաները պետք է համաձայնություն տան որդեգրման համար[31], բացառությամբ այն դեպքերի, երբ երեխան բավական երկար ժամանակ ապրել է հավանական որդեգրող ծնողների ընտանիքում, լիովին հարմարվել է ընտանիքին և որդեգրող ծնողներին համարում է իր ծնողները: Խնամակալության հանձնաժողովները պաշտոնական այն մարմիններն են, որոնք

---

[28] ՀՀ ամուսնության և ընտանիքի օրենսգիրք, հոդված 111:

[29] «Երեխայի որդեգրման ընթացակարգի մասին» ՀՀ կառավարության որոշում, թիվ 64, փետրվարի 12, 2000թ., պարբ. 27:

[30] Անդ, պարբ. 9:

[31] ՀՀ ամուսնության և ընտանիքի մասին օրենսգիրք, հոդված 117:

օրենքով կոչված են պարզելու, թե արդյոք երեխան համաձայն է որդեգրվելու այդ ընտանիքի կողմից: Թեև Ամուսնության և ընտանիքի մասին օրենսգիրքը չի նշում, թե ինչպիսին պետք է լինի նման համաձայնության ձևը, «Երեխայի որդեգրման ընթացակարգի հաստատման մասին» ՀՀ կառավարության որոշումը հստակորեն պահանջում է, որ դա պետք է արտահայտվի կամ ապացուցվի գրավոր[32], իսկ Սոցիալական ապահովության նախարարությունը նշում է, որ «Երեխայի հետ Խնամակալության տարածքային կամ հանրապետական հանձնաժողովի զրույցի արձանագրությունը համարվում է երեխայի համաձայնության կամ դրա բացակայության մասին գրավոր վկայություն»[33]:

Որդեգրման ցանկություն հայտնած օտարերկրյա քաղաքացիները դիմում են ներկայացնում Խնամակալության ազգային հանձնաժողով: Հանձնաժողովը քննարկում է դիմումը և ծնող ճանաչվելու մասին դրական որոշման դեպքում գրանցում է դիմողին՝ որպես հնարավոր որդեգրող ծնող, Սոցիալական ապահովության կենտրոնացված ռեգիստրում: Դիմումի քննարկման ընթացքում Հանձնաժողովը կարող է կարծիք-հանձնարարականներ հայցել այն երկրի ՀՀ հյուպատոսարանից կամ հայ համայնքից կամ հայ եկեղեցուց, որտեղ բնակվում է դիմողը:

Որևէ կոնկրետ երեխայի որդեգրման մասին դիմումը գրանցված հնարավոր որդեգրող ծնողը ներկայացնում է տեղական այն համայնքի կառավարական մարմիններին, որտեղ երեխան, որպես կանոն, բնակվում է: Որդեգրման մասին որոշումը կայացնում է տեղական իշխանության ղեկավարը, ինչը պայմանավորված է ՀՀ կառավարության պաշտոնական թույլտվությամբ:

Հայաստանի օրենսդրությունը որդեգրման հետ կապված դատական գործընթացում չի ճանաչում լիազորված այլ մարմին, քան պետական իշխանություններն են: Ավելին, ընտանեկան օրենսգրքի նախագիծը հստակորեն արգելում է «առանց ծնողական խնամքի մնացած երեխաների կարգավիճակի սահմանման (իդենտիֆիկացիայի) և տեղավորման հարցում օժանդակությունը»[34] անհատների կողմից, ինչպես նաև, բացի Կառավարությունից, իրավաբանական այլ միավորի կողմից: Միևնույն ժամանակ, հնարավոր որդեգրող ծնողների կողմից պատշաճ ձևով լիազորված անձինք իրավունք ունեն դիմում ներկայացնելու որդեգրող ծնողների անունից կենտրոնական իշխանություններին[35]:

---

[32] «Երեխայի որդեգրման ընթացակարգի հաստատման մասին» ՀՀ կառավարության որոշում, թիվ 64, պարբ. 33 /դ/:

[33] «Երեխայի որդեգրման ընթացակարգի իրականացման ուղենիշների մասին» Սոցիալական ապահովության նախարարության որոշում, թիվ 66, պարբ. 21,. սեպտեմբերի 19, 2000թ.:

[34] Ընտանեկան օրենսգրքի նախագիծ, հոդված 138, պարբ. 1:

[35] ՀՀ ամուսնության և ընտանիքի օրենսգիրք, հոդված 117: «Երեխայի որդեգրման ընթացակարգի հաստատման մասին» ՀՀ կառավարության որոշում, թիվ 64, պարբ. 19:

Հայաստանը չի վավերացրել և չի միացել Երեխաների պաշտպանության և արտերկրյա որդեգրման հարցերում համագործակցության մասին Հաագայի կոնվենցիային (այսուհետ՝ Հաագայի կոնվենցիա): Հաագայի կոնվենցիային միացումը պետք է առաջնահերթ ձևով քննարկվի՝ նկատի ունենալով, որ ներքին օրենսդրությունը սահմանափակ հնարավորություններ է ընձեռում արտերկրյա որդեգրումների դեպքում չարաշահումների դեմ պայքարելու առումով: Նաև անհրաժեշտություն կա լրացնելու ներքին օրենսդրական դաշտը միջազգային կարգավորմամբ, ինչպես պահանջում է Երեխայի իրավունքների մասին կոնվենցիայի 21-րդ հոդվածը[36]:

Առկա օրենսդրությունը հսկայական բեռ է դնում Հայաստանի իշխանությունների վրա և չի նախատեսում արդյունավետ այնպիսի մեխանիզմ, որը հնարավորություն կտար Հայաստանին համագործակցելու ընդունող երկրի հետ՝ համոզվելու, որ հնարավոր որդեգրող ծնողը նախընտրելի թեկնածու է որդեգրելու համար, և որդեգրումն իրոք ելնում է երեխայի շահերից: Չկա նաև որոշակի մեխանիզմ որդեգրվածի վիճակը արտերկրում գտնվելու ընթացքում վերահսկելու համար: Որևէ օրենսդրական ակտ ներկայումս թույլ չի տալիս Հայաստանի իշխանություններին՝ ընդունող երկրի իշխանություններից ամփոփ զեկույցներ կամ տեղեկատվություն ստանալ որդեգրման տվյալ դեպքի մասին: Այդ հնարավորությունը տալիս է Հաագայի կոնվենցիան:

---

[36] Երեխայի իրավունքների մասին կոնվենցիա, հոդված 21, /ե/, «Հնարավորության դեպքում նպաստել սույն հոդվածի նպատակների իրականացմանը՝ կնքելով երկկողմ և բազմակողմ պայմանավորվածություններ և համաձայնագրեր և ջանալ այս շրջանակներում ապահովել, որպեսզի երեխայի տեղավորումն այլ երկրում իրականացվի իրավասու իշխանությունների կամ մարմինների կողմից»:

ԳԼՈՒԽ II. ՔԱՆԱԿԱԿԱՆ ՍՈՑԻՈԼՈԳԻԱԿԱՆ ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՈՒԹՅՈՒՆ

2.1 Մեթոդաբանությունը և հարցվողների վերաբերյալ տեղեկատվությունը

2.1.1 Ուսումնասիրության մեթոդաբանությունը

Շահառու խմբերի շրջանում քանակական սոցիոլոգիական հետազոտության իրականացման համար ընտրվել էր անհատական ստանդարտացված հարցազրույցի մեթոդը՝ որպես հետազոտության գործիք օգտագործելով նախապես մշակված հարցաթերթիկները:

2003-2004թթ. ուստարում Հայաստանի Հանրապետությունում գործել են 54 պետական և 3 ոչ պետական հատուկ դպրոցներ: Այդ ուսումնական տարում պետական հատուկ դպրոցներում սովորող երեխաների թվաքանակը կազմել է 10,585, իսկ ոչ պետականում՝ 185 երեխա: Ըստ տեղաբաշխվածության՝ այդ հաստատություններից 25-ը գտնվում էին Երևան քաղաքում, իսկ 29-ը՝ մարզերում:

2003թ. գործել է 12 մանկական խնամատարական կազմակերպություն, որից 8-ը՝ պետական, իսկ 4-ը՝ ոչ պետական:

Պետական մանկական խնամատարական կազմակերպություններից 3-ը գտնվում էին Երևանում, 2-ը՝ Շիրակի, 1-ական՝ Արարատի, Գեղարքունիքի և Լոռու մարզերում:

Ոչ պետական կազմակերպություններից 2-ը գտնվում էին Շիրակի մարզում, 1-ական՝ Կոտայքի և Լոռու մարզերում: Ուսումնական տարվա վերջում երեխաների թվաքանակը նշված մանկատներում կազմել է 1,160 երեխա, որից 590-ը աղջիկներ էին և 570-ը՝ տղաներ[37]:

Հետազոտության ընտրանքը անցկացվել է Հայաստանի Հանրապետությունում ներկայումս գործող 12 մանկատների և 54 հատուկ դպրոցների 11,745 աշակերտների շրջանում: Հետազոտվել է այդ աշակերտների 10.6%-ը:

Ընտրանքի համար հաշվի են առնվել հետևյալ գործոնները.

- հաստատությունների գտնվելու վայրը (Երևան և մարզեր),
- հաստատությունների թվաքանակը,
- հաստատությունների տեսակը (հատուկ դպրոցներ, մանկատներ),

---

[37] Հայաստանի Հանրապետության սոցիալական վիճակը 2003 թ., Հայաստանի Հանրապետության ազգային վիճակագրական ծառայություն, Վիճակագրական ժողովածու, Եր., 2004թ., էջ 16-24, 176-183:

- հաստատություններում սովորող երեխաների (շրջանավարտների) թվաքանակը:

Ելնելով նշված գործոններից՝ կիրառվել է բազմաստիճան համաչափ տարածքային պատահական ընտրանքի սկզբունքը՝ 3 փուլով.

- առաջին փուլում կազմվել է Հայաստանի Հանրապետությունում գործող հատուկ դպրոցների և մանկատների ցանկը՝ ըստ գտնվելու վայրի,
- երկրորդ փուլում, հաշվի առնելով այդ հաստատությունների թվաքանակը, գործունեության տեսակը և հաճախող երեխաների թվաքանակը, Երևան քաղաքում և մարզերում ընտրվել և կազմվել է հարցմանը մասնակցող հաստատությունների ցանկը,
- երրորդ փուլում, հիմք ընդունելով այդ հաստատություններում առկա աշակերտների ցուցակները (հաշվառման մատյանները), հաշվարկված քայլի միջոցով, ընտրանքի համամասնության սկզբունքով այդ մատյաններից դուրս է գրվել հարցմանը մասնակցող բարձր դասարաններում սովորող (7-10-րդ դասարան) աշակերտների թվաքանակը:

Ելնելով ընտրանքի սկզբունքներից՝ հարցումն իրականացվել է Երևանում, Շիրակի մարզի Գյումրի և Արթիկ, Լոռու մարզի՝ Վանաձոր և Ստեփանավան, Սյունիքի մարզի՝ Կապան, Գորիս և Սիսիան, Կոտայքի մարզի՝ Աբովյան, Գեղարքունիքի մարզի՝ Գավառ և Սևան քաղաքային բնակավայրերում, որտեղ գտնվում են այդ հաստատությունները:

Երևան քաղաքի 10 հաստատությունից հարցմանը մասնակցել են 434, Շիրակի մարզում՝ 5-ից՝ 309, Լոռիում՝ 4-ից՝ 248, Սյունիքում՝ 4 հաստատությունից՝ 170, Կոտայքի մարզի 1 հաստատությունից՝ 59, Գեղարքունիքի 3 հաստատությունից՝ 54 աշակերտ:

Այսպիսով, Հայաստանի 6 մարզի հաստատություններից հարցմանը մասնակցել են բարձր դասարանների 1274 աշակերտ:

Ընտրանքի նույն սկզբունքներով նշված մարզերում հարցմանը մասնակցել են այդ աշակերտների 235 ընտանիք:

Հաշվի առնելով այն հանգամանքը, որ այդ հաստատությունների շրջանավարտները խառը բնակություն են հաստատել Հայաստանի տարբեր բնակավայրերում, և նրանց մասին բացակայում էին ամբողջական վիճակագրական տվյալներ, նպատակահարմար գտնվեց հարցումները անցկացնելու համար կիրառել ձնակույտի մեթոդը: Շրջանավարտներին գտնելու և հարցումներ իրականացնելու համար նրանց գտնվելու վայրի մասին հարցազրուցավարներին կարևոր տեղեկություն են տրամադրել մանկատների և հատուկ դպրոցների տնօրինությունը և այդ հիմնախնդիրներով զբաղվող «Այգաբաց» հասարակական կազմակերպությունը: Յուրաքանչյուր հարցազրույցից հետո

հարցազրուցավարներին այդ բնակավայրում գտնվող շրջանավարտների մասին նոր հասցեներ են տրամադրել հարցվածները: Այդ մեթոդով հարցումներն իրականացվել են նշված 6 մարզի 289 շրջանավարտի շրջանում:

Հարցման ընտրանքում ընտրված 6 մարզի մանկատնից և հատուկ դպրոցներից հարցմանը մասնակցել են 125 ուսուցիչ: Միայն մանկատներում 2003 թվականին մանկավարժների թվաքանակը կազմել է 218 աշխատող:

Մանկատան և հատուկ դպրոցների աշակերտների և դրանց շրջանավարտների շրջանում թրաֆիքինգի դեպքեր բացահայտելու ակնկալիքով ՀՕՄ-ը արտերկրում գտնվող իր միավորումների միջոցով, ինչպես նաև հայ եկեղեցու, հայկական դեսպանատների անմիջական աջակցությամբ սոցիոլոգիական հարցումներ է իրականացրել նաև Հայաստանից Հունաստան և ԱՄՆ մեկնած 94 անձանց շրջանում:

Սոցիոլոգիական հարցմանը մասնակցել են նաև փորձագետներ, որոնց մասնակցության անհրաժեշտությունը առաջին հերթին պայմանավորված էր նրանով, որ ստացված տեղեկությունները էապես կարող էին նպաստել ուսումնասիրվող խնդիրների առավել մանրամասն լուսաբանմանը: Փորձագետներն ընտրվել են, հաշվի առնելով նրանց աշխատանքի ոլորտը, ինչպես նաև թրաֆիքինգ երևույթի վերաբերյալ նրանց լավատեղյակությունը: Ելնելով այդ սկզբունքներից, հարցմանը մասնակցելու համար նշված մարզերի պետական կառավարման և տեղական ինքնակառավարման ոլորտից, դատաիրավական, կրթական, առողջապահական, սոցիալական ապահովության համակարգից, ՀԿ-ների և ՁԼՄ-ների ներկայացուցիչներից ընտրվել էին 57 փորձագետ:

Ընդհանուր առմամբ հարցմանը մասնակցել է 2,074 մարդ (ընտրանքի մասին ավելի մանրամասն տե՛ս Հավելված Ա-ում):

Հարցումներն իրականացնելու համար ՀՕՄ հասարակական կազմակերպությունից ընտրվել էին 23 կին և 2 տղամարդ հարցազրուցավարներ:

ԵԱՀԿ գրասենյակի հրավիրած փորձագետը հարցազրուցավարների հետ թրաֆիքինգի հիմնախնդիրների վերաբերյալ անցկացրել է երկօրյա սեմինար: Հարցազրուցավարների խմբի հետ մեկ օրով ուսուցողական դասընթացներ են անցկացրել նաև ծրագրի սոցիոլոգը, հոգեբանը և իրավաբանը, որոնք բացատրել են իրականացվող ծրագրի նպատակը և խնդիրները, մանկատան և հատուկ դպրոցի երեխաների և շրջանավարտների հետ շփման առանձնահատկությունները, հարցազրույց վարելու տեխնիկան:

Հարցումն իրականացվել է 2004թ. նոյեմբերից մինչև 2005թ. ապրիլ ամիսների ընթացքում:

Հետազոտությունից ստացված տվյալները ենթարկվել են համակարգչային մշակման: Համակարգչային տվյալների բազայի կազմակերպման համար

օգտագործվել է հատուկ հավաքածու, որն իրականացվել է Microsoft Access և SQL Server միջավայրում: Կատարվել են հարցաթերթիկային տվյալների ստուգում, հարցաթերթիկներում տեղ գտած տրամաբանական սխալների շտկում և մուտքագրում: Ստացված սոցիոլոգիական տվյալները մշակվել են ըստ հարցվածների սեռի, տարիքի, կրթության և մարզերի:

2.1.2 Հարցվածների սոցիալ-ժողովրդագրական բնութագրիչները

Հարցվածների սեռատարիքային կազմը: Հարցմանը մասնակցած մանկատան և հատուկ դպրոցների աշակերտները և դրանց շրջանավարտները եղել են 14-ից 25 տարեկան: Մանկատան և հատուկ դպրոցների աշակերտների 53.8%-ը և շրջանավարտների 54.7%-ը պատկանում էին իգական, իսկ համապատասխանաբար 46.2%-ը և 45.3%-ը՝ արական սեռին: Դպրոցականների շրջանում ամենաներկայացվածը 14-15 տարիքային խումբն էր (64,9%), իսկ շրջանավարտների շրջանում՝ 19-20 (50.9%): Տարիքային նշված խմբերի ներկայացուցչությունը պայմանավորված էր հատուկ դպրոցների և մանկատների երեխաների սեռատարիքային բաշխվածության առանձնահատկությամբ:

Գծապատկեր 1 Հատուկ դպրոցի և մանկատան աշակերտների տարիքային կազմը	Գծապատկեր 2 Հատուկ դպրոցի և մանկատան շրջանավարտների տարիքային կազմը
	

Հարցվածների կրթական բնութագիրը: Հարցվածների 73%-ը սովորում էր 7-8-րդ, իսկ 27%-ը՝ 9-10-րդ դասարաններում: Շրջանավարտների 19.4%-ը ուներ թերի միջնակարգ, 42,9%-ը՝ միջնակարգ, 32.5%-ը՝ միջնակարգ մասնագիտական կրթություն, իսկ բարձրագույն կրթություն ունեցողների թվաքանակը ընդամենը 5.2% էր:

Գծապատկեր 3 Հատուկ դպրոցի և մանկատան աշակերտների կրթամակարդակը	Գծապատկեր 4 Հատուկ դպրոցի և մանկատան շրջանավարտների կրթամակարդակը
	

Աշակերտների 93.4%-ը սովորում էր հատուկ դպրոցում, իսկ 6.6%-ը՝ մանկատանը: Հարցմանը մասնակցած հատուկ հաստատությունների շրջանավարտների թվաքանակը կազմել է 66.8%, իսկ մանկատներինը՝ 33.2 %:

Հարցվածների ընտանեկան դրությունը: Մանկատան և հատուկ դպրոցների երեխաների 235 ընտանիքներում իրականացված հարցումներից պարզ դարձավ, որ.

նրանց 74 %-ը լիարժեք ընտանիք էր. ծնողները ողջ են և ապրում են ամուսնական զույգի կարգավիճակով: Այդ երեխաների ծնողների 13,6%-ը ամուսնալուծված էր, 10.6%-ի ընտանիքներում երեխաները միակողմանի ծնողազուրկ էին, իսկ 1,7%-ը ապրում էր չամուսնացած հարազատների հետ:

Գծապատկեր 5
Հարցված ծնողների բաշխումը՝ ըստ ընտանեկան դրության



Մանկատներում և հատուկ դպրոցներում գտնվող երեխաների որոշ մասը այդ հաստատության մշտական բնակիչներ են, և նրանց շփումները իրենց ընտանիքների և հարազատների հետ սահմանափակ են: Մարզերում երեխաների մեծ մասը օրվա ընթացքում մնում է այդ հաստատություններում, իսկ գիշերում է տանը:

Մինչև երեք անձից բաղկացած ընտանիքները կազմում էին հարցմանը մասնակցած ընտանիքների 15.7%-ը, չորս անձից բաղկացածները՝ 34.0%-ը, հինգ անձից բաղկացածները՝ 15.7%-ը, վեց անձից բաղկացածները՝ 23.8%-ը, յոթ անձից բաղկացածները՝ 6.4%-ը, 8-10 անձից բաղկացածները՝ 4.3%-ը: Երկու և ավելի անչափահաս երեխաներ ունեցող ընտանիքները հարցման մասնակիցների շրջանում կազմում էին 75.4%:

Գծապատկեր 6
Անչափահաս երեխաների թվաքանակը ընտանիքում



Ինչ վերաբերում է այդ հաստատությունների շրջանավարտների ընտանեկան դրությանը, ապա հարցման մասնակիցների ճնշող մեծամասնությունը՝ 81%-ը, դեռևս ամուրի էր, ամուսնացած էր նրանց 14.2%-ը, ամուսնալուծված էր 4.2%-ը, իսկ 0.4%-ը այրի էր (տե՛ս Գծապատկեր 7):

Գծապատկեր 7
Հատուկ դպրոցի և մանկատան շրջանավարտների ընտանեկան կարգավիճակը



2.2 Ռիսկի գործոնները մանկատների և հատուկ դպրոցների աշակերտների համար

2.2.1 Սոցիալ-տնտեսական գործոնները

Ներկա պայմաններում Հայաստանում մանկատան և հատուկ դպրոցի երեխաներին և այդ հաստատության շրջանավարտներին իրենց տնտեսական և սոցիալական անպաշտպանության առումով կարելի է դասել հասարակության առավել խոցելի խմբերի շարքին: Այդ երեխաները սոցիալապես անապահով, միակողմանի և երկկողմանի ծնողազուրկ, բազմազավակ և չքավոր ընտանիքներից են: Այդ ընտանիքները, գտնվելով ծայրահեղ աղքատության վիճակում և չկարողանալով հաղթահարել երեխաների սննդի, հագուստի, կրթության և այլ կարևոր հիմնախնդիրներ, ստիպված երեխաներին տեղափոխում են մանկատներ և հատուկ դպրոցներ[38]: Արտաքին աշխարհի հետ շփումների և փոխհարաբերությունների տեսանկյունից մանկատները և հատուկ դպրոցներն իրենց գործունեությամբ դեռևս համարվում են «փակ» հաստատություններ, իսկ երեխաները այնտեղ ապահով չեն չարաշահումներից[39]:

---

[38] ՄԱԿ-ի Մանկական հիմնադրամի հայաստանյան գրասենյակի կատարած հետազոտությունները ցույց են տալիս, որ այդ հաստատությունների 60%-ը հիմնականում երեխաներ է ընդունում սոցիալապես անապահով ընտանիքներից: Տե՛ս Երեխաները Հայաստանի գիշերօթիկ հաստատություններում, իրավիճակի վերլուծություն, Եր., օգոստոս, 2000թ.:

[39] ՄԱԿ-ի Մանկական հիմնադրամի հայաստանյան գրասենյակի և ՀՕՄ հասարակական բարեգործական կազմակերպության կողմից կատարված սոցիոլոգիական հետազոտության արդյունքները ցույց են տալիս, որ այդ հաստատություններում երեխաները ոչ միայն ենթարկվել են

Սոցիալական ապահովության խնդիրների լուծման առումով վերջին շրջանում պետությունը կատարում է որոշ քայլեր, բայց դեռևս մանկատան սաների շատ փոքր մասին է կարողանում ապահովել բնակարաններով, և այդ հաստատությունները ավարտելուց հետո երիտասարդների մեծ մասը դեռևս մնում է անօթևան և առանց աշխատանքի, ինչը նրանց շրջանում բարձրացնում է ապօրինի փոխադրումների ենթարկվելու վտանգը:

«Ինչպե՞ս կբնութագրեիք Ձեր ընտանիքի նյութական վիճակը» հարցին հարցվածների պատասխաններն ունեն հետևյալ պատկերը.

Աղյուսակ 1

Ընտանիքի նյութական վիճակը՝ ըստ երեխաների ծնողների և այդ հաստատության շրջանավարտների

	Հատուկ դպրոցի և մանկատան շրջանավարտներ		Հատուկ դպրոցի և մանկատան աշա-կերտների ծնողներ	
	թիվ	%	թիվ	%
Դրամը մեզ չի բավականացնում նույնիսկ ամենաանհրաժեշտ սննդամթերք գնելու համար	106	36,7%	99	42,1%
Դրամը մեզ բավականացնում է միայն խիստ անհրաժեշտ սննդամթերքի, հագուստի գնման համար	120	41,5%	113	48,1%
Այն բավարար է ինչպես սննդամթերքի, այնպես էլ հագուստի համար, սակայն խնայողություններ չենք կարողանում անել	47	16,3%	19	8,1%
Մենք ապրում ենք կանոնավոր և մինչև անգամ կատարում որոշ խնայողություններ	5	1,7%	2	0,9%
Մենք մեզ ոչնչից չենք զրկում	1	0,3%	-	-
Դժվարանում եմ պատասխանել	10	3,5%	2	0,9%
Ընդամենը	**289**	**100,0%**	**235**	**100,0%**

Այդ հարցում հարցվածների արտահայտած կարծիքները, որոնք, անշուշտ, կարող են լինել նաև սուբյեկտիվ, այնուհանդերձ, հնարավորություն են տալիս եզրակացնելու, որ այդ հաստատությունների երեխաների ընտանիքների 90.2%-ը և շրջանավարտների ընտանիքների 78.2%-ը հիմնականում գտնվում են աղքատության դաշտում[40]:

հոգեբանական, ֆիզիկական, այլև սեռական բռնությունների: Տե՛ս Երեխաների նկատմամբ կատարվող բռնությունները Հայաստանի Հանրապետությունում, Եր., 2003 թ.:

[40] Համեմատական կարգով նշենք, որ տնային տնտեսությունների ինտեգրացված հետազոտության արդյունքներով 2001 թ.-ին հանրապետությունում աղքատ բնակչության տեսակարար կշիռը կազմել է

2.2.2 Դժվարություններ առօրյա կյանքում

Հարցման մասնակիցների կարծիքով, նրանց ընտանիքները ներկա պայմաններում բախվում են սոցիալական այնպիսի կարևոր հիմնախնդիրների, ինչպիսիք են ընտանիքի ցածր եկամուտները՝ 66.4%, գործազրկությունը՝ 47.2%, երեխաներին սնունդով և հագուստով ապահովելը՝ 45.5%, բնակարանային հիմնախնդիրը՝ 37.9 %, ընտանիքի անդամների բուժման հետ կապված ծախսերը՝ 37.4%, ապագայի նկատմամբ ունեցած անորոշությունը, կրթության հետ կապված ծախսերը՝ 21.3%, ընտանիքի անդամի արտագաղթի խնդիրը՝13.6% :

Ի տարբերություն այդ հաստատության երեխաների ընտանիքների՝ առօրյա կյանքում ունեցած դժվարությունների վերաբերյալ շրջանավարտների արտահայտած կարծիքները բաժանվել են հետևյալ կերպ.

Գծապատկեր 8

Շրջանավարտների դժվարությունները առօրյա կյանքում



Բերված աղյուսակից կարելի է եզրակացնել, որ հարցմանը մասնակցած շրջանավարտները, բացի աշխատանք, բնակարան, հագուստ, սնունդ ունենալու կարիքներից, կրթության և բուժման հետ կապված ծախսերի անմատչելիությունից, առնչվում են հոգեբանական այնպիսի լուրջ հիմնախնդիրների հետ, ինչպիսիք են ապագայի հետ կապված անորոշ վիճակը, ընտանեկան ջերմության պակասը: Այդ ընտանիքներում նյութական անապահով վիճակի և բազմաթիվ չլուծված հիմնախնդիրների առկայությունը կարելի է գնահատել որպես թրաֆիքինգի ենթարկվելու վտանգներից մեկը, որի հետևանքով նրանք հեշտությամբ են

50.9%: Հայաստանի սոցիալական պատկերը և աղքատությունը, Վիճակագրական վերլուծական զեկույց, Եր., 2002, էջ 33:

ներքաշվում անօրինական փոխադրումների ոլորտ: Երեխաների խոցելի վիճակից կարող են օգտվել հավաքագրողները՝ նրանց տալով մեծ գումարներ վաստակելու, շահավետ աշխատանք ունենալու կեղծ խոստումներ:

2.2.3 Հանրապետությունից մեկնելուն նպաստող գործոնները (push factors)

Հարցմանը մասնակցած մանկատների և հատուկ դպրոցների երեխաների 44,8%-ը և շրջանավարտների 66.8%-ը իրենց իդենտիֆիկացրել են հասարակության առավել անպաշտպան խմբին: Ի տարբերություն շրջանավարտների՝ երեխաների մեծամասնությունը իրեն համարել է համեմատաբար պաշտպանված, ինչը առաջին հերթին կարելի է բացատրել այդ հաստատություններում սննդի, հագուստի կարիքների բավարարման հանգամանքով:

Աղյուսակ 2

Մանկատների և հատուկ դպրոցների աշակերտները և շրջանավարտները՝ որպես հասարակության առավել անպաշտպան և խոցելի խումբ

	Հատուկ դպրոցի և մանկատան աշակերտներ /n=1274/		Հատուկ դպրոցի և մանկատան շրջանավարտներ /n=289/	
	թիվ	%	թիվ	%
Այո	571	44,8%	193	66,8%
Ոչ	703	55,2%	96	33,2%
Ընդամենը	**1274**	**100,0%**	**289**	**100,0%**

Հետազոտությունում ընդգրկված փորձագետները և մանկավարժները նույնպես նրանց համարել են հասարակության առավել անպաշտպան և խոցելի խումբ: Նրանց կարծիքները այդ հարցում համապատասխանաբար կազմել են 73,2% և 82,4%:

Մանկատների և հատուկ դպրոցների երեխաները և դրանց շրջանավարտները առանձնացրել են հասարակության մեջ իրենց անպաշտպանության մի շարք պատճառներ, որոնք կարելի է գնահատել որպես թրաֆիքինգի ենթարկվելու հնարավոր ռիսկեր:

Աղյուսակ 3
Հասարակության առավել անպաշտպան և խոցելի խումբ համարվելու պատճառները

	Հատուկ դպրոցի և մանկատան աշակերտներ /n=1665/	Հատուկ դպրոցի և մանկատան շրջանավարտներ /n=825/	**Ընդամենը**
Նյութական ծանր վիճակը	27,4%	16,6%	**44,0%**
Բնակարանային, կենցաղային պայմանները	13,8%	13,1%	**26,9%**
Գործազրկության բարձր մակարդակը	9,9%	13,5%	**23,4%**
Կանոնավոր սնվելու և հագնվելու հիմնախնդիրները	13,9%	8,6%	**22,5%**
Ընտանիքում կոնֆլիկտային հարաբերությունները	11,8%	10,7%	**22,5%**
Հեռանկարի անորոշությունը	7,9%	11,5%	**19,4%**
Սոցիալական անպաշտպանությունը	9,2%	10,1%	**19,3%**
Իրավական անպաշտպանությունը	4,3%	8,4%	**12,7%**
Օրենսդրական դաշտի անկատարությունը	1,6%	7,4%	**9,0%**
Այլ	0,2%	0,2%	**0,4%**

Եթե փորձենք խմբավորել հարցման մասնակիցների արտահայտած կարծիքները, ապա հանրապետությունից մեկնելուն նպաստող առաջին խումբ գործոններն առնչվում են նյութական ծանր վիճակի, բնակարանային ու կենցաղային վատ պայմանների, նրանց շրջանում գործազրկության բարձր մակարդակի, ոչ կանոնավոր սնվելու և հագնվելու հանգամանքների հետ:

Պատճառների երկրորդ խումբը, որը նույնպես կարելի է դասել Հայաստանից մեկնելուն նպաստող գործոնների շարքին, ընտանիքներում առկա կոնֆլիկտային հարաբերություններն են, որոնց հետևանքով երեխաները հաճախ հայտնվում են այդ հաստատություններում:

Ակնհայտ է, որ երեխայի լիարժեք ձևավորման համար կարևոր նշանակություն ունի ընտանեկան միջավայրը, որը համարվում է նրանց կանոնավոր սոցիալականացման գործընթացի կարևոր պայման: Դրա բացակայությունը կարող է ազդել երեխայի հոգեկան վիճակի և բնավորության վրա՝ առաջ բերելով վարքագծային խոր շեղումներ: Այս տեսանկյունից ակնհայտ կապ

կարելի է տեսնել կոնֆլիկտային ընտանիքների, այդ ընտանիքներում բռնության ենթարկված երեխաների և նրանց թրաֆիքինգի ենթարկվելու ռիսկերի միջև[41]:

Վանող գործոնների երրորդ խումբը, որն ավելի շատ ունի հոգեբանական բնույթ, կապված է այդ հաստատությունները ավարտելուց հետո նրանց հետագա պլանների բացակայության և հեռանկարի անորոշության հետ, ինչը հաճախ նրանց ստիպում է բռնել արտագաղթի ճանապարհը: Կարևոր խնդիր է նաև սեփական կյանքի նկատմամբ պատասխանատվության և ճիշտ որոշումներ կայացնելու հմտությունների պակասը: Այս առումով, եթե հայ ընտանիքներում հիմնականում գերակշռում է ծնողների գերհովանավորությունը, ապա այն երեխաները, ովքեր ուղարկվում են մանկատներ և հատուկ դպրոցներ, հավանական է, որ գտնվել են նվազ խնամքի և հովանավորության պայմաններում, որը ենթադրում է սեփական ապագայի նկատմամբ պատասխանատվության կասկածելի աստիճան:

Հայաստանում արդեն գրանցվել են մի շարք դեպքեր, երբ կավատները, օգտվելով երեխաների անպաշտպան վիճակից, սեռական շահագործման նպատակով Արաբական էմիրություններ են տեղափոխել հատկապես մանկատան և հատուկ դպրոցների երեխաների[42]:

Պատճառների չորրորդ խումբը առնչվում է օրենսդրական դաշտի անկատարության, իրավական և սոցիալական ոչ բավարար պաշտպանվածության խնդիրների հետ:

2.3 Թրաֆիքինգի վերաբերյալ իրազեկության աստիճանի գնահատումը

Մանկատան և հատուկ դպրոցների աշակերտների և այդ հաստատությունների շրջանավարտների շրջանում հետագա կանխարգելման գործողությունների իրականացման առումով կարևոր խնդիրներ են թրաֆիքինգի երևույթի վերաբերյալ նրանց իրազեկության աստիճանի գնահատումը, այդ հարցում առկա ձեռքբերումները և բացթողումները:

---

[41] 2003թ. մանկատան և հատուկ դպրոցների երեխաների շրջանում կատարված հետազոտությունները ցույց են տվել, որ ընտանեկան կոնֆլիկտները երեխաների շրջանում հանգեցնում են լուրջ հոգեբանական հետևանքների՝ տրամադրության անկում, ընկճվածություն, ճնշվածություն, գլխացավ, անքնություն, վախ, ուսման առաջադիմության անկում, ագրեսիայի դրսևորում, դասընկերների շրջանում հեղինակության կորուստ: Բացի դրանից, հարցման մասնակիցների կարծիքով, ընտանեկան կոնֆլիկտները երեխաների շուրջ 4.8%-ի շրջանում առաջ են բերում դպրոցը թողնելու, իսկ 4.4%-ի շրջանում՝ տանից փախչելու ցանկություն:

[42] Մանկատան և հատուկ դպրոցների երեխաների ապօրինի փոխադրումների մասին բազմաթիվ փաստեր են նշված Միգրացիայի միջազգային կազմակերպության հայաստանյան գրասենյակի կողմից 2001թ. սեպտեմբերին իրականացված ուսումնասիրության մեջ: Տե՛ս Կանանց և երեխաների ապօրինի փոխադրումները Հայաստանի Հանրապետությունից. ուսումնասիրություն, Եր., 2001թ.:

Մանկատների և հատուկ դպրոցների երեխաները և շրջանավարտները որքանո՞վ են տեղեկացված թրաֆիքինգի մասին, արդյոք ստանո՞ւմ են բավարար տեղեկատվություն, որքանո՞վ են բավարարված այդ տեղեկատվությունից, կա՞ արդյոք դրա պահանջարկը նրանց շրջանում, և որքանո՞վ է այն ազդում նրանց կողմից որոշումների կայացմանը և ակտիվ գործողությունների դիմելուն: Նշված հարցերի վերաբերյալ ամբողջական պատկեր ստանալու համար հարցաթերթիկում հարցերը ձևակերպված էին այնպես, որ հնարավորություն տվեցին բացահայտելու թրաֆիքինգի վերաբերյալ նրանց տեղեկացվածության հետևյալ երեք մակարդակը.

- լսե՞լ են, թե՞ ոչ թրաֆիքինգի երևույթի մասին,
- լսե՞լ են արդյոք պատմություններ թրաֆիքինգի և դրա կազմակերպիչների վերաբերյալ,
- թրաֆիքինգի ի՞նչ դեպքեր գիտեն:

2.3.1 Ընդհանուր իրազեկություն

Հարցվողների արտահայտած կարծիքները բաժանվել են հետևյալ կերպ. թրաֆիքինգի ենթարկվածների կամ կազմակերպիչների մասին պատմություններ լսել են մանկատան և հատուկ դպրոցների աշակերտների 50.8%-ը և նրանց ծնողների (խնամակալների) 55.3%-ը, մանկատների և հատուկ դպրոցների շրջանավարտների շրջանում նրանց թվաքանակը կազմել է 50.8%, ուսուցիչների շրջանում նման պատմություններ լսել է նրանց 81.6%-ը, փորձագետների շրջանում նման պատմություններ լսել է նրանց 86%-ը:

Ըստ հարցման արդյունքների՝ թրաֆիքինգի մասին բոլորովին տեղյակ չեն մանկատների և հատուկ դպրոցի երեխաների 43.5%-ը, նրանց ծնողների/խնամակալների 41.3%-ը, այդ հաստատությունների շրջանավարտների 36.7%-ը, մանկատների և հատուկ դպրոցների ուսուցիչների 12.8 %-ը:

Աղյուսակ 4
Թրաֆիքինգի վերաբերյալ իրազեկությունը

	Հատուկ դպրոցի և մանկատան աշակերտներ /n=1274/		Հատուկ դպրոցի և մանկատան շրջանավարտներ /n=289/	
	թիվ	%	թիվ	%
Անձամբ գիտեմ մեկին, որը ենթարկվել է թրաֆիքինգի	73	5,7 %	30	10,4 %
Լսել եմ պատմություններ թրաֆիքինգի ենթարկվածների կամ կազմակերպիչների մասին	647	50,8 %	153	52,9 %
Բոլորովին տեղյակ չեմ թրաֆիքինգի երևույթի մասին	554	43,5 %	106	36,7 %
Ընդամենը	**1274**	**100, 0%**	**289**	**100, 0%**

Ուսումնասիրությունը ցույց տվեց, որ թրաֆիքինգի դեպքերի մասին տեղեկացվածությունը կախված է կրթական մակարդակից: Այդ առումով հարցմանը մասնակցած բարձրագույն կրթություն ունեցող շրջանավարտների 73.3%-ը պատմություններ է լսել թրաֆիքինգի ենթարկված մարդկանց և դրա կազմակերպիչների մասին, 20%-ը ծանոթ է մարդկանց, ովքեր ենթարկվել են թրաֆիքինգի: Թրաֆիքինգի դեպքերի մասին տեղեկացվածությունը համեմատաբար ցածր է միջնակարգ մասնագիտական (42.6%) և թերի միջնակարգ (39.3) կրթություն ունեցողների շրջանում:

2.3.2 Մասնավոր դեպքեր

Հատկանշական է նաև այն փաստը, որ հարցման մասնակիցները անձամբ գիտեն դեպքեր, երբ մարդիկ ենթարկվել են թրաֆիքինգի. մանկատների և հատուկ դպրոցների աշակերտների շրջանում այն կազմել է 5.7%, իսկ ծնողների/խնամակալների շրջանում՝ 3.4%, շրջանավարտների շրջանում՝ 10.4%, իսկ ուսուցիչների շրջանում՝ 5.6%, փորձագետների շրջանում այն կազմել է 12.3%: Որոշ պատասխաններ վերաբերում են հենց մոտ ազգականների հետ տեղի ունեցած դեպքերին (մայր, հայր, քույր, եղբայր, քեռի):

Անշուշտ, թրաֆիքինգի երևույթի վերաբերյալ պատմությունների և դեպքերի մասին հարցման մասնակիցների տված պատասխաններին պետք է մոտենալ որոշ վերապահումներով, պետք է հաշվի առնել այն հանգամանքը, թե դրանք որքանով են իրական, և որքանով նույն դեպքերը հարցման մասնակիցների շրջանում չեն կրկնվում: Հավանաբար, այստեղ մեծ կարող է լինել սուբյեկտիվ գործոնը: Կարելի է ենթադրել, որ պատմություններն անմիջապես առնչվել են հարցման

մասնակիցներին: Երեխան գիտի, սակայն չի ուզում պատմել, որովհետև պատմությունը ցավոտ է իր համար, կամ մտածում է, թե իրեն չեն հավատա: Անշուշտ, թրաֆիքինգի դեպքերի վերաբերյալ այդ կարծիքների որոշ մասը կարող է կրկնվել, լինել ոչ հավաստի, այնուհանդերձ, նրանց նկարագրած դեպքերը լուրջ անհանգստության և մտորումների տեղիք են տալիս: Հարցմանը մասնակցած մանկատան և հատուկ դպրոցի աշակերտները հաստատել են, որ իրենց բնակավայրում գիտեն 39 դեպք (հարցվածների 3.1%-ը), իսկ այդ հաստատությունների շրջանավարտները՝ 37 դեպք (հարցվածների12.8%-ը), երբ այդ հաստատությունների աշակերտներին (մինչև 18տ.) և շրջանավարտներին տարել են արտասահման շահութաբեր աշխատանքի, բայց իրականում նրանք այնտեղ հարկադրաբար զբաղվել են այլ աշխատանքով կամ չեն վարձատրվել աշխատանքի դիմաց:

Աշխատանքային շահագործման դեպքերի վերաբերյալ իրազեկությունը	
Գծապատկեր 9 **Հատուկ դպրոցի և մանկատան աշակերտների իրազեկությունը**	**Գծապատկեր 10** **Հատուկ դպրոցի և մանկատան շրջանավարտների իրազեկությունը**
	

Բերված տվյալները հնարավորություն են տալիս ենթադրելու, որ մանկատների և հատուկ դպրոցների աշակերտների և շրջանավարտների շրջանում առկա են աշխատանքային շահագործման դեպքեր:

Բացի աշխատանքային շահագործումից, հարցման մասնակիցները նշել են նաև սեռական շահագործման դեպքեր, որոնց ապօրինի տեղափոխման հետևանքով զոհ են դարձել մանկատների և հատուկ դպրոցների երեխաներն ու շրջանավարտները:

«Ձեր բնակավայրում գիտե՞ք դեպքեր, երբ Ձեր դպրոցի աշակերտները (մինչև 18տ.) արտասահմանում զբաղվել են մարմնավաճառությամբ և ներկայումս վերադարձել են Հայաստան» (նույն հարցը տրվել էր նաև այդ հաստատության շրջանավարտներին): Պատասխանները բաշխվել են հետևյալ ձևով.

Սեռական շահագործման վերաբերյալ իրազեկությունը	
Գծապատկեր 11 **Հատուկ դպրոցի և մանկատան աշակերտների իրազեկությունը**	**Գծապատկեր 12** **Հատուկ դպրոցի և մանկատան շրջանավարտների իրազեկությունը**
	

Մանկատների և հատուկ դպրոցների աշակերտների շրջանում սեռական շահագործման դեպքերի մասին իրազեկ են հարցման մասնակիցների 2,9 %-ը, իսկ շրջանավարտների՝ 11,4%-ը: Մանկատների և հատուկ դպրոցների աշակերտների և նրանց շրջանավարտների շրջանում սեռական շահագործման ենթարկվելու 8 դեպքի մասին են նշել նաև նրանց ծնողները (հարցվածների 3.4%-ը), 8 դեպք՝ նրանց ուսուցիչները (հարցվածների 6.8%-ը), և 6 դեպք՝ ծրագրում ընդգրկված փորձագետները (հարցվածների 10.5%-ը): Ըստ փորձագետների՝ թրաֆիքինգի 2 զոհ արտասահմանից վերադառնալուց հետո նույնիսկ հոգեբանական և իրավաբանական օգնություն ստանալու նպատակով դիմել են իրենց: Փորձագետները նշել են նաև, որ իրենց պրակտիկայում հանդիպել է մեկ դեպք, երբ մանկատների և հատուկ դպրոցների սաներին հավաքագրելու և արտասահման ուղարկելու համար միջնորդը ենթարկվել է վարչական պատասխանատվության, իսկ 4 դեպքի կապակցությամբ հարուցվել է քրեական գործ, բայց հետագայում այն կասեցվել է:

Հետաքրքիր փաստեր են նշել այդ հաստատությունների շրջանավարտները՝ անդրադառնալով թրաֆիքինգի կամ ուրիշներին թրաֆիքինգի մեջ ներքաշելու և նրանց շահագործելու դեպքերին: Նրանց 10,7%-ը նշել է, որ հայտնի է թրաֆիքինգի կամ ուրիշներին թրաֆիքինգի մեջ ներքաշելու 31 դեպք, իսկ 13.7%-

ը նույնիսկ նշել է այն երկրները, որտեղ այդ հաստատությունների շրջանավարտները ենթարկվում են ֆիզիկական և սեռական շահագործման: Այդ երկրներից հարցման մասնակիցները նշել են Արաբական Միացյալ Էմիրությունները, Թուրքիան, Ռուսաստանի Դաշնությունը, ԱՄՆ-ը, Հունաստանը:

2.3.3 Թրաֆիքինգի հետևանքների գնահատումը

Հարցման մասնակիցները արտահայտել են իրենց կարծիքները թրաֆիքինգի հետևանքների մասին: Նկատի ունենալով հնարավոր պատասխանների բազմազանության հանգամանքը, նպատակահարմար գտնվեց այդ հարցը հարցաթերթիկում ձևակերպել փակ ձևով և հետևանքների գնահատումը կատարել 10 բալանոց համակարգով: Հարցվածների կարծիքով թրաֆիքինգը մարդկանց վրա առավել ուժեղ ազդեցություն է ունենում հետևյալ առումներով.

- շրջապատից նրանց մեկուսացում - 3.2 միավոր,
- այդ երկրներում ապօրինի կարգավիճակ - 3.1 միավոր,
- աշխատանքային շահագործում - 2.7 միավոր,
- սեռական ճանապարհով փոխանցվող հիվանդություններ - 2.7 միավոր,
- մարդու վաճառք - 2.3 միավոր,
- ծեծ, խոշտանգում և այլ չարաշահումներ - 2.2 միավոր,
- սեռական շահագործում - 2.2 միավոր,
- մարդու օրգանների վաճառք - 2.1 միավոր:

Աղյուսակից կարելի է ենթադրել, որ հարցման մասնակիցների տված գնահատականները թրաֆիքինգի հետևանքների ազդեցության վերաբերյալ ցածր են, ինչը պայմանավորված կարող է լինել այդ երևույթի մասին գիտելիքների ոչ բավարար մակարդակով:

2.3.4 Թրաֆիքինգի վերաբերյալ գիտելիքների գնահատումը

Թրաֆիքինգի վերաբերյալ իրազեկության աստիճանը ազդում է երեխաների գործելակերպի և այդ հարցում որոշումներ կայացնելու վրա: Այդ առումով հարցման մասնակիցներին տրված «Ենթադրենք՝ Ձեր ընկերուհիներից/ընկերներից մեկին նրա ծանոթները խոստացել են շահութաբեր աշխատանք արտասահմանում: Ձեր գիտելիքները բավարա՞ր են նրան այդ երևույթի վերաբերյալ անհրաժեշտ խորհուրդներ տալու համար» հարցին մանկատների և հատուկ դպրոցների երեխաների միայն 6.7 %-ն է պատասխանել «այո», 42.8%-ը՝ որոշ չափով, իսկ շուրջ կեսը՝ 50.5%-ը, իր գիտելիքները այդ հարցում համարել է անբավարար:

Գծապատկեր 13

Թրաֆիքինգի վերաբերյալ մանկատների և հատուկ դպրոցների աշակերտների գիտելիքների գնահատում



Ըստ տարիքային կազմի՝ այդ հարցում իրենց գիտելիքները բավարար չեն համարել 14-15տ. տարիքային խմբերը, որոնց շրջանում այն կազմել է 52.5%: Մինչդեռ 16-17տ. տարիքային խմբում թրաֆիքինգի վերաբերյալ գիտելիքները բավարար է համարել նրանց 47.5%-ը, իսկ 18 և բարձր տարիքային խմբում՝ 39.3%: Սա խոսում է այն մասին, որ տարիքի հետ կապված՝ նկատվում է թրաֆիքինգի վերաբերյալ գիտելիքների աճ: Ըստ սեռային կազմի՝ թրաֆիքինգի վերաբերյալ բավարար գիտելիքներ չունեցողների թվաքանակը աղջիկների շրջանում ավելի բարձր է և կազմել է 55.1%, իսկ տղաների շրջանում՝ 46.2%:

Գիտելիքների խորությունը գնահատելու համար այն երեխաներին, ովքեր թրաֆիքինգի մասին իրենց գիտելիքները բավարար էին գնահատել (85 երեխա), առաջարկվել էր հինգ եռյակ տարբերակներից բաղկացած խորհուրդների խումբ, և առաջարկվել էր յուրաքանչյուր եռյակից ընտրել այն մեկ խորհուրդը, որն իրենք կտային իրենց ընկերոջը/ընկերուհուն արտասահման մեկնելուց առաջ: Պարզվեց, որ հինգ դեպքում էլ մասնակիցների գերակշռող մեծամասնությունը ճիշտ էր կողմնորոշվել պատասխանի ընտրության հարցում: Ճիշտ խորհուրդները հարցվածները ընտրել են հետևյալ տոկոսային հարաբերությամբ[43].

- չվստահել անգամ ծանոթներին անձնագիրը կամ այլ փաստաթղթեր՝ 83,7%,

[43] Տոկոսները հաշվարկված են հարցվածների այն թվաքանակից, ովքեր բավարար են գնահատել իրենց գիտելիքները թրաֆիքինգի երևույթի վերաբերյալ (85 աշակերտ):

- չվստահել անգամ ծանոթներին և պահանջել արտասահմանում աշխատելու աշխատանքային պայմանագիրը՝ 77,8%,
- արտասահման մեկնելուց առաջ պատճենահանել փաստաթղթերը, դրանք վերցնել իր հետ կամ թողնել հարազատների մոտ՝ 87,0%,
- հրավիրողներից պահանջել արտերկրում գտնվելու հասցեն և հեռախոսահամարները, դրանք թողնել հարազատների մոտ՝ 90,0%,
- մեկնելուց առաջ գտնել ՀՀ դեսպանատան, Միավորված ազգերի կազմակերպության (ՄԱԿ) և Միգրացիայի միջազգային կազմակերպության հասցեները՝ 75,1%:

2.3.5 Թրաֆիքինգի վերաբերյալ Հայաստանի Հանրապետությունում գործող օրենքների մասին իրազեկությունը

Հարցման մասնակիցների արտահայտած կարծիքները հնարավորություն են տալիս կատարելու հետևյալ եզրակացությունները. թրաֆիքինգի վերաբերյալ Հայաստանի Հանրապետության գործող օրենքներին ամբողջովին տեղյակ է հարցմանը մասնակցած մանկատների և հատուկ դպրոցների աշակերտների միայն 0.5%-ը, մասամբ է տեղյակ 13.7%-ը, իսկ բոլորովին տեղյակ չէ 85.8%-ը: Թրաֆիքինգի մասին Հայաստանի Հանրապետության գործող օրենքների վերաբերյալ տեղեկացվածության գրեթե նույն պատկերն է դիտարկվում նաև այդ հաստատությունների շրջանավարտների շրջանում: Նրանց շրջանում այդ օրենքներին ամբողջովին տեղյակ է 0.3%-ը, մասամբ է տեղյակ 24.2%-ը, իսկ բոլորովին տեղյակ չէ 75.4%-ը: Մանկատների և հատուկ դպրոցների երեխաների ընտանիքների շուրջ 85.1%-ը և այդ հաստատությունների ուսուցիչների 56%-ը բոլորովին տեղյակ չեն Հայաստանի Հանրապետությունում թրաֆիքինգի վերաբերյալ գործող օրենքներին:

Աղյուսակ 5

	Հատուկ դպրոցի և մանկատան աշակերտներ /n=1274/		Հատուկ դպրոցի և մանկատան շրջանավարտներ /n=289/	
	թիվ	%	թիվ	%
Ամբողջովին տեղյակ եմ	7	0,5%	1	0,3%
Մասամբ եմ տեղյակ	174	13,7%	70	24,2%
Բոլորովին տեղյակ չեմ	1093	85,8%	218	75,4%
Ընդամենը	**1274**	**100,0%**	**289**	**100,0%**

2.3.6 Թրաֆիքինգի վերաբերյալ իրազեկության և գիտելիքների ձևավորման աղբյուրների գնահատումը

Ինչ վերաբերում է թրաֆիքինգի վերաբերյալ հարցման մասնակիցների իրազեկության աղբյուրներին, ապա մանկատների և հատուկ դպրոցների աշակերտների և շրջանավարտների շրջանում, որպես տեղեկատվության հիմնական աղբյուր, համարվում է հեռուստատեսությունը: Հեռուստատեսությունը՝ որպես իրազեկության աղբյուր, մանկատների և հատուկ դպրոցների աշակերտների դեպքում կազմել է 32.9%, իսկ շրջանավարտների շրջանում՝ 34,1%:

Աղյուսակ 6
Մարդկանց անօրինական փոխադրումների և վաճառքի վերաբերյալ իրազեկության աղբյուրները[44]

	Հատուկ դպրոցի և մանկատան աշակերտներ /n=1274/		Հատուկ դպրոցի և մանկատան շրջանավարտներ /n=289/	
	թիվ	%	թիվ	%
Պետական պաշտոնյաներ	2	0,1%	2	0,4%
Հասարակական կազմակերպություններ	52	2,7%	21	4,7%
Դպրոցի աշխատակիցներ	147	7,7%	-	-
Հեռուստատեսություն	626	32,9%	154	34,1%
Ռադիո	84	4,4%	18	4,0%
Թերթեր	206	10,8%	47	10,4%
Բուկլետներ, գրքույկներ, թերթիկներ	43	2,3%	11	2,4%
Ինտերնետ	26	1,4%	13	2,9%
Ընտանիքի անդամներ և հարազատներ	280	14,7%	36	8,0%
Ընկերներ, ծանոթներ	416	21,9%	116	25,7%
Անձնական, ընտանիքի կամ ընկերների փորձից	-	-	13	2,9%
Անձնական դիտարկումներ	-	-	19	4,2%
Այլ	18	0,9%	-	-
Ընդամենը	**1900**	**100,0%**	**451**	**100,0%**

Տոկոսային հարաբերությամբ տեղեկատվության հաջորդ կարևոր աղբյուր ինչպես մանկատների և հատուկ դպրոցների աշակերտների, այնպես էլ այդ հաստատությունների շրջանավարտների շրջանում համարվում են ընկերները և ծանոթները: Այս աղբյուրից թրաֆիքինգի մասին տեղեկատվություն են ստանում հարցվածների համապատասխանաբար 21.9 և 25,7%-ը: Տեղեկատվական այդ

[44] Հնարավոր է մեկից ավելի պատասխան:

աղբյուրը կարելի է գնահատել ոչ այնքան հուսալի, քանի որ Հայաստանում գրանցվել են թրաֆիքինգի մասնավոր դեպքեր, երբ ծանոթներն են համարվել հավաքագրողները, որոնք խաբել, թաքցրել և ոչ օբյեկտիվ են ներկայացրել նպատակակետ երկրներում կատարվող աշխատանքի բնույթը[45]:

Պետական պաշտոնյաները, հասարակական կազմակերպությունները, ռադիոն, թերթերը, ինտերնետը, բուկլետները հարցմանը մասնակցածների գերակշիռ մեծամասնության համար դեռևս չեն համարվում թրաֆիքինգի վերաբերյալ տեղեկատվության հիմնական աղբյուր:

Թրաֆիքինգի վերաբերյալ բավարար տեղեկատվության, համապատասխան գրականության և նյութերի բացակայությունը, հիմնախնդրի վերաբերյալ հրապարակային քննարկումների պակասը հանգեցրել են նրան, որ այդ երեխաների և հաստատությունների շրջանավարտների, նրանց ընտանիքների և այդ հաստատությունների ուսուցիչների շրջանում թրաֆիքինգի վերաբերյալ իրավական գիտելիքները դեռևս մնում են շատ ցածր մակարդակի: Այդ հանգամանքը կապ ունի նաև նրանց հետաքրքրությունների շրջանակների, տարիքային կազմի և կրթական մակարդակի հետ:

Այդ առումով ուսուցիչների շրջանում անցկացված հետազոտության արդյունքները այնքան էլ հուսադրող չեն, քանի որ նրանք նույնպես թրաֆիքինգի թեմաներով շատ քիչ քննարկումներ են կազմակերպում աշակերտների շրջանում: Աշակերտներին տրված «Ուսուցիչները դպրոցում Ձեզ հետ քննարկո՞ւմ են մարդկանց անօրինական փոխադրումների և վաճառքի թեման» հարցին երեխաների միայն 11,4 %-ն է տվել դրական, իսկ 28.3%-ը՝ «երբեմն» պատասխանները: Մինչդեռ հարցման մասնակիցների մեծամասնությունը՝ 60.4%-ը, այդ հարցին տվել է բացասական պատասխան: «Իսկ Դուք բարձր դասարանի աշակերտների հետ քննարկո՞ւմ եք մարդկանց անօրինական փոխադրումների և վաճառքի թեման» հարցին ուսուցիչների 16.8%-ը պատասխանել է «Այո», 47.2%-ը երբեմն է քննարկում այդ թեման, իսկ ուսուցիչների 36.0%-ը ընդհանրապես չի անդրադառնում այդ թեմային:

---

[45] Այդպիսի մի քանի օրինակների անդրադարձել է «Զարուհի» շաբաթաթերթը: Տե՛ս «Զարուհի», դեկտեմբեր, 2004թ., թիվ 25, նույնը՝ փետրվար, 2005թ., թիվ 2:

Գծապատկեր 14 Մարդկանց անօրինական փոխադրումների և վաճառքի թեմայի քննարկումը մանկատների և հատուկ դպրոցների աշակերտների շրջանում	Գծապատկեր 15 Ընտանիքում երեխաների հետ մարդկանց անօրինական փոխադրումների և վաճառքի թեմայի քննարկումը
	

Երեխաների ընտանիքներում և նրանց ուսուցիչների շրջանում անցկացված հետազոտության արդյունքները այդ հարցում ունեն հետևյալ պատկերը. ուսուցիչների շուրջ 87,2 %-ը և ընտանիքների 53.3%-ը նշել են, որ հետաքրքրվածությունը մեծ է թրաֆիքինգի վերաբերյալ ԶԼՄ-ներով այդ թեմայի վերաբերյալ բավարար տեղեկատվություն ստանում է միայն ուսուցիչների 27.2%-ը, իսկ ընտանիքների՝ 16.6 %-ը: Մնացած մասը այդ հարցին տվել է բացասական պատասխան և նշել, որ այդ թեմայով հանրապետությունում բացակայում է բավարար տեղեկատվությունը, ուսուցիչների 81.6%-ի կարծիքով դպրոցների գրադարաններում ամբողջությամբ, իսկ 17.6%-ի կարծիքով մասամբ բացակայում են թրաֆիքինգի վերաբերյալ համապատասխան գրականություն և նյութեր, ինչը խոչընդոտ է երեխաների շրջանում իրազեկության բարձրացման և քննարկումներ անցկացնելու համար: Թրաֆիքինգի վերաբերյալ դասընթացներին մասնակցել է ուսուցիչների միայն 8%-ը, քննարկումներին՝ 17.6%-ը, այդ թեմայով ֆիլմերի դիտմանը՝ 26.4%-ը: Ուսուցիչների այդպիսի ցածր ակտիվությունը, ըստ նրանց, պայմանավորված է նման միջոցառումների սակավությամբ, նաև այն հանգամանքով, որ մարդկանց անօրինական փոխադրումների և վաճառքի կանխարգելման ոլորտում համապատասխան աշխատանքային փորձ ունի միայն փորձագետների 17.5%-ը, իսկ մնացած մասը որակավորման ձեռքբերման և բարձրացման առումով անելիքներ ունի: Ուսումնասիրության արդյունքները ցույց են տալիս, որ թրաֆիքինգի կանխարգելման ոլորտում հատկապես որակավորման ձեռքբերման և բարձրացման կարիք ունեն դատաիրավական համակարգի,

կրթական, առողջապահական և սոցիալական ոլորտի համապատասխան մասնագետները:

2.4 Միգրացիոն կողմնորոշումները և թրաֆիքինգի ենթարկվելու ռիսկի բացահայտումը

2.4.1 Միգրացիոն կողմնորոշումները

Աշակերտների և այդ հաստատության շրջանավարտների ապագա պլաններում նկատվում է հետևյալ միտումը. հարցման արդյունքներով աշակերտների 9.1 %-ը և շրջանավարտների 20.4%-ը իրենց ապագան չեն կապել այս երկրի հետ և ցանկություն են հայտնել մեկնել հանրապետությունից: Նրանց ապագայի ծրագրերում գերիշխում են միգրացիոն տրամադրությունները և նրանք դրական են վերաբերվել հանրապետությունից մեկնելու գաղափարին: Հարցումից պարզվեց, որ միգրացիոն տրամադրությունները հատկապես բարձր են տղաների շրջանում (12.4% - տղաների եւ 6.3%-աղջիկների շրջանում): Ըստ կրթական գործոնի՝ միգրացիոն հակվածություն ունի միջնակարգ կրթությամբ շրջանավարտների 25.8%-ը և թերի միջնակարգ կրթությամբ շրջանավարտների 21.4%-ը: Աշակերտների շուրջ 60.2%-ը ցանկություն է հայտնել մնալ հանրապետությունում: Այդ աշակերտների շուրջ կեսը հետագայում որոշել է սովորել որևէ արհեստ, շուրջ մեկ երրորդը՝ ստանալ բարձրագույն կրթություն, իսկ որոշ մասը՝ կազմել ընտանիք և փնտրել աշխատանք:

Գծապատկեր 16

Դպրոցն ավարտելուց հետո հատուկ դպրոցի և մանկատան աշակերտների ապագայի պլանները



Համարյա նույն պատկերն է դիտարկվում նաև շրջանավարտների շրջանում: Նրանց 50.2%-ը ցանկություն է հայտնել մնալ հանրապետությունում. վերջիններիս ապագա ծրագրերի մեջ են մտնում աշխատանք գտնելու, արհեստ սովորելու, բարձրագույն կրթություն ստանալու և ընտանիք կազմելու խնդիրները:

Որպես հանրապետությունից մեկնելու գլխավոր պատճառներ՝ հաստատությունների աշակերտները և շրջանավարտները նշել են՝

- տեղում աշխատանքի բացակայությունը,
- դրսում բարձր վարձատրությամբ աշխատանք գտնելը,
- հեռանկարի անորոշությունը,
- իրավական անպաշտպանությունը:

Աղյուսակ 7
Միգրացիայի նպատակը

	Հատուկ դպրոցի և մանկատան աշակերտներ /n=157/		Հատուկ դպրոցի և մանկատան շրջանավարտներ /n=81/	
	թիվ	%	թիվ	%
Աշխատելու	82	52.3%	53	65.4%
Սովորելու	36	22,9%	5	6,2%
Մշտական բնակություն հաստատելու	26	16,6%	12	14,8%
Ամուսնության համար	7	4,5%	7	8,6%
Այլ	6	3,8%	4	4,9%
Ընդամենը	**157**	**100,0%**	**81**	**100,0%**

Ըստ աղյուսակի տվյալների՝ աշակերտների 52.3%-ը, իսկ շրջանավարտների 65.4%-ը, որպես միգրացիայի պատճառ, նշել է աշխատելու ցանկությունը: Աշակերտների 22.9%-ը ձգտում է մեկնել արտասահման՝ սովորելու նպատակով: Ինչպես աշակերտների, այնպես էլ շրջանավարտների արտասահման մեկնելու հետագա ծրագրերում առկա են նաև մշտական բնակություն հաստատելու պլանները և ամուսնանալու հանգամանքը:

2.4.2 Արտասահման մեկնելու պայմանների վերաբերյալ տեղեկատվական աղբյուրները

Հարցման մասնակիցները արտասահման մեկնելու պայմանների վերաբերյալ կարևոր տեղեկատվության աղբյուր են համարել ծանոթներին, ընկերներին, հարևաններին: Նրանց թվաքանակը դպրոցի աշակերտների շրջանում

կազմել է 36.2%, իսկ շրջանավարտների շրջանում՝ 49.1%: Այդ աղբյուրը կարելի է համարել ոչ այնքան հուսալի, քանի որ Հայաստանում գրանցվել են թրաֆիքինգի բազմաթիվ դեպքեր, երբ ծանոթների դերում թաքնվել են հավաքագրողներ և օգնության անվան տակ իրենց ծառայություններն են առաջարկել այդ ընտանիքներին:

Աղյուսակ 8
Արտասահման մեկնելու պայմանների վերաբերյալ տեղեկատվության աղբյուրները

	Հատուկ դպրոցի և մանկատան աշակերտներ /n=224/		Հատուկ դպրոցի և մանկատան շրջանավարտներ /n=116/	
	թիվ	%	թիվ	%
Ծանոթներ, ընկերներ, հարևաններ	81	36,2%	57	49,1%
Արդեն արտասահմանում աշխատող անձինք	57	25,4%	23	19,8%
Հեռուստա/ռադիո ազդագրեր	24	10,7%	2	1,7%
Թերթեր	22	9,8%	2	1,7%
Ծանոթությունների ակումբ՝ ինտերնետով	18	8,0%	7	6,0%
Պատահական անձինք, ովքեր արտասահմանում աշխատանք են առաջարկել	11	4,9%	15	12,9%
Զբոսաշրջային գործակալություններ	8	3,6%	2	1,7%
Աշխատանքի տեղավորման գործակալություններ	3	1,3%	5	4,3%
Ամուսնության գործակալություններ	1	0,4%	0	0,0%
Այլ	19	8,5%	3	2,6%
Ընդամենը	**224**	**100,0%**	**116**	**100,0%**

Տեղեկատվության երկրորդ աղբյուրը, որը աշակերտների շրջանում կազմում է 25,4%, իսկ շրջանավարտների շրջանում՝ 19,8 %, համարվում են արտասահմանում աշխատող անձինք:

Հարցման մասնակիցների որոշ մասը արտասահման մեկնելու համար տեղեկատվության աղբյուր համարել է ազդագրերը և մամուլի գովազդները: Անշուշտ, այդ գովազդները կարող են ազդել նրանց միգրացիոն վարքագծի վրա, քանի որ տեղական մամուլում հաճախակի կարելի է հանդիպել արտասահմանում «գայթակղիչ» աշխատանք ունենալու բազմաթիվ հայտարարությունների, որոնք, բնականաբար, մեծ ազդեցություն կարող են ունենալ գործազուրկների և նյութական ծանր պայմաններում գտնվող մարդկանց շրջանում:

Հայաստանում, հատկապես Երևան, Գյումրի և Վանաձոր քաղաքներում, գնալով լայն տարածում են գտնում ինտերնետային ակումբները: Հարցմանը մասնակցած աշակերտների 8%-ը և շրջանավարտների 6 %-ը հույս ունեն, որ արտասահմանում կգտնեն աշխատանք, իսկ ինտերնետի միջոցով՝ ամուսին: Միաժամանակ նշենք, որ ինտերնետից լիովին կարողանում են օգտվել աշակերտների 28.4%-ը, իսկ շրջանավարտների 6.8%-ը:

Ներկա պայմաններում Հայաստանում կարևոր դերակատարում ունեն նաև աշխատանքի տեղավորման և զբոսաշրջային գործակալությունները, որոնց գործունեությունը պետությունը դեռևս լիովին չի կանոնակարգել: Հարցման

մասնակիցների որոշ մասը դրանք համարել է կարևոր աղբյուր արտասահմանում աշխատանք գտնելու համար: Միևնույն ժամանակ, Հայաստանում գրանցվել են դեպքեր, երբ այդ ծառայությունների միջոցով մարդկանց ապօրինի տեղափոխել են այլ երկրներ: Հայաստանում դեռեւս չեն գործում որդեգրման գործակալություններ:

Ինչ վերաբերում է տեղաշարժերի ուղղություններին, ապա հարցման մասնակիցները հետագայում պատրաստվում են մեկնել Ռուսաստանի Դաշնություն, ԱՄՆ, Ֆրանսիա, Գերմանիա, Լեհաստան, Հոլանդիա, Հունաստան:

Հետաքրքիր է, որ թեև նրանք ցանկություն են հայտնել մեկնել այդ երկրներ, սակայն աշակերտների միայն 3.4%-ը և շրջանավարտների 8.5 %-ն են տեղյակ այդ պետություններում գործող միգրացիոն ռեժիմների մասին: Այդ պետություններում գործող ռեժիմին բոլորովին տեղյակ չեն միգրացիոն կողմնորոշում ունեցող աշակերտների շուրջ 57.8%-ը և շրջանավարտների 30,5%-ը, ինչը հետագայում թրաֆիքինգի ենթարկվելու վտանգի առումով լուրջ մտորումների տեղիք է տալիս:

Աղյուսակ 9
Տեղեկացվածությունը այդ երկրներում գործող միգրացիոն ռեժիմների վերաբերյալ

	Հատուկ դպրոցի և մանկատան աշակերտներ /n=116/		Հատուկ դպրոցի և մանկատան շրջանավարտներ /n=59/	
	թիվ	%	թիվ	%
Ամբողջովին տեղյակ եմ	4	3,4%	5	8,5%
Մասամբ եմ տեղյակ	45	38,8%	36	61,0%
Բոլորովին տեղյակ չեմ	67	57,8%	18	30,5%
Ընդամենը	**116**	**100,0%**	**59**	**100,0%**

Տեղեկացվածության պակասի հետևանքով առավել մտահոգիչ է նաև այն փաստը, թե աշակերտների 34.5%-ը և շրջանավարտների 42.4%-ը արտահայտել են այն կարծիքը, որ իրենց անձնագիրը և այլ փաստաթղթեր հետագայում կվստահեն այն մարդկանց, ովքեր կազմակերպելու են իրենց մեկնումը արտասահման:

Աշակերտների և շրջանավարտների կողմից անձնագիրը և այլ փաստաթղթերը վստահելը արտասահման մեկնելու կազմակերպիչներին	
Գծապատկեր 17 Մանկատների և հատուկ դպրոցների աշակերտներ	Գծապատկեր 18 Մանկատների և հատուկ դպրոցների շրջանավարտներ
	

2.5 Թրաֆիքինգի կանխարգելման ուսուցման և խորհրդատվական կարիքների գնահատումը

Մանկատների և հատուկ դպրոցների երեխաների և նրանց շրջանավարտների շրջանում թրաֆիքինգի կանխարգելմանն ուղղված հետագա գործողությունների շարքում պետք է կարևորել ուսուցողական և խորհրդատվական միջոցառումների իրականացումը, ինչի կարիքն ունի հարցման մասնակիցների մեծ մասը: Մարդկանց անօրինական փոխադրումների և վաճառքի թեմայով իրավական գիտելիքների բարձրացումը կարևորել են ինչպես մանկատների և հատուկ դպրոցների աշակերտները և շրջանավարտները, այնպես էլ նրանց ծնողները և ուսուցիչները: «Մարդկանց անօրինական տեղափոխման և վաճառքի թեմայով իրավական գիտելիքների կարիք զգո՞ւմ եք» հարցի պատասխանները բաշխվել են հետևյալ ձևով. մանկատների և հատուկ դպրոցների աշակերտների շուրջ 92.9 %-ը, իսկ շրջանավարտների շուրջ 90.7 %-ը նշել են, որ ունեն իրավական գիտելիքների բարձրացման կարիք:

Աղյուսակ 10
Իրավական գիտելիքների պահանջարկը

	Հատուկ դպրոցի և մանկատան աշակերտներ /n=1274/		Հատուկ դպրոցի և ման-կատան շրջա-նավարտներ /n=289/		Հատուկ դպրոցի և մանկատան երեխաների ընտանիքներ /n=235/		Հատուկ դպրոցի և մանկատան ուսուցիչներ /n=125/	
	թիվ	%	թիվ	%	թիվ	%	թիվ	%
Մեծ չափով	554	43,5%	49	20,9%	57	45,6%	99	34,3 %
Որոշ չափով	629	49,4%	152	64,7%	61	48,8%	163	56,4 %
Բոլորովին կարիք չեմ զգում	91	7,1%	34	14,5%	7	5,6%	27	9,3%
Ընդամենը	**1274**	**100%**	**235**	**100%**	**125**	**100%**	**289**	**100 %**

Երեխաների շրջանում, որպես կարծիք ձևավորողներ, իրավական գիտելիքների բարձրացման պահանջը կարևորել են նաև նրանց ընտանիքների շուրջ 85.6 %-ը և ուսուցիչների շուրջ 94.4%-ը:

Այդ կարիքը բավարարելու համար մանկատների և հատուկ դպրոցների աշակերտների 88.5%-ը և այդ հաստատությունների շրջանավարտների 74.%-ը մարդկանց անօրինական տեղափոխման և վաճառքի թեմայով միջոցառումների և քննարկումների կազմակերպման դեպքում դրանց մասնակցելու ցանկություն են հայտնել: Հատկանշական է, որ նման միջոցառումներին մասնակցելու ցանկություն է հայտնել բարձրագույն կրթություն ունեցողների 93.3%-ը:

Աղյուսակ 11
Անօրինական տեղափոխման և վաճառքի թեմայով քննարկումներին և միջոցառումներին մասնակցությունը

	Հատուկ դպրոցի և մանկատան աշակերտներ /n=1274/		Հատուկ դպրոցի և մանկատան շրջանավարտներ /n=289/	
	թիվ	%	թիվ	%
Այո	1128	88,5%	214	74,0%
Ոչ	146	11,5%	75	26,0%
Ընդամենը	1274	100,0%	289	100,0%

Մարդկանց անօրինական տեղափոխման և վաճառքի թեմաներով քննարկումներին և միջոցառումներին մասնակցելու ցանկություն են հայտնել նաև

այդ երեխաների ծնողների 68.5 %-ը և այդ հաստատությունների ուսուցիչների 90.4 %-ը:

Աղյուսակում բերված են անօրինական տեղափոխման և վաճառքի կանխարգելման ուղիների վերաբերյալ հետագա միջոցառումների կազմակերպման առումով հարցման մասնակիցների կատարած առաջարկությունները: Ըստ տոկոսային հարաբերության՝ աշակերտները առաջին հերթին կարևորել են դպրոցներում այդ թեմաներով դասընթացների անցկացումը, այնուհետև՝ հեռուստահաղորդումները և անմիջական քննարկումները: Ծնողները, շրջանավարտները և մանկավարժները կարևորել են թրաֆիքինգի թեմաներով հեռուստահաղորդումները և մամուլում հրապարակումները, բուկլետների, գրքույկների հրատարակումը և անվճար բաշխումը: Հարցման մասնակիցների հաջորդ խումբ կարծիքները առնչվում են թրաֆիքինգի կանխարգելմանը կամ թրաֆիքինգի ենթարկվածների համար որոշակի ծառայությունների մատուցմանը: Հարցման մասնակիցները մասնավորապես կարևորել են հետևյալ ծառայությունները. հոգեբանական, իրավաբանական, բժշկական, այդ հարցերով զբաղվող հասարակական կազմակերպությունների դերի ակտիվացումը:

Աղյուսակ 12
Թրաֆիքինգի կանխարգելման ուղիների վերաբերյալ առաջարկություններ

	Աշակերտ-ներ	Շրջանա-վարտներ	Ուսուցիչ-ներ	Ծնողներ
	%	%	%	%
Դասընթացների անցկացում	24,4	13,0	17,6	14,0
Հեռուստահաղորդումներ	22,6	19,2	22,9	28,0
Ռադիոելույթներ	4,3	7,4	2,7	6,5
Մամուլով հրապարակումներ	5,9	9,0	5,3	8,4
Բուկլետների, գրքույկների հրատարակում և անվճար բաժանում	6,5	9,5	11,2	8,7
Անմիջական քննարկումներ	10,1	8,6	6,7	6,6
Հոգեբանական խորհրդատվության մատուցում	9,8	10,2	11,5	9,0
Բժշկական խորհրդատվության մատուցում	6,1	7,9	5,3	5,3
Իրավաբանական խորհրդատվության մատուցում	5,9	7,4	11,2	6,9
Այդ հիմնախնդիրներով զբաղվող հասարակական կազմակերպությունների գործունեության ակտիվացում	3,8	6,9	5,1	6,1
Այլ	0.5	0,8	0,5	0.4

2.6 Հայաստանից մեկնած անձանց մասին տեղեկատվություն

ՀՕՄ-ը մանկատների և հատուկ դպրոցների աշակերտների և շրջանավարտների շրջանում թրաֆիքինգի դեպքեր բացահայտելու նպատակով ԱՄՆ-ում և Հունաստանում իր միավորումների միջոցով ուսումնասիրություն է անցկացրել Հայաստանից մեկնած 94 անձանց հետ: Նրանց 85%-ը այդ երկրներ մեկնել էր հիմնականում աշխատելու նպատակով: Նրանց խոստացել էին ծերերի և երեխաների խնամք և աշխատանք՝ սպասարկման այլ ոլորտներում:

Այդ երկրներում նրանց 64.9 %-ը աշխատանքի/ամուսնության մասին տեղեկություններ է ստացել ծանոթներից, ընկերներից, հարևաններից, իսկ 33%-ը՝ այդ երկրներում արդեն աշխատող մարդկանցից: Նրանց 37.2%-ը նշել է, որ մեկնելուց առաջ բավականաչափ տեղեկատվություն չի ունեցել այդ երկրներում իրենց առաջարկվող աշխատանքի վերաբերյալ: Մեկնածների 60.6%-ը նշել է, որ դա կազմակերպել են զբոսաշրջային գործակալությունները, իսկ մյուս մասի համար՝ այնտեղ ապրող հարազատները, ընկերները, ծանոթները և այլն:

Հարցման մասնակիցներից մեկը այդ երկիր է մեկնել իր կամքին հակառակ՝ ստիպողաբար. 8 մարդու ձեռքից միջնորդը վերցրել է անձնագրերը և սահմանափակել տեղաշարժերը: 9 անձից 8-ը նշել են, որ նպատակակետ երկիր հասնելու համար չեն ունեցել մուտքի օրինական վիզա, իսկ մեկը հրաժարվել է պատասխանել հարցին: Նրանցից 7-ը նպատակակետ երկիր մեկնել են տարանցիկ ճանապարհով, իսկ մեկը նշել է, որ միջնորդը օդանավակայանում ունեցել է ծանոթ և կաշառքի միջոցով ինքը կարողացել է թափանցել այդ երկիր: Այդ գործարքների և փաստաթղթերի դիմաց միջնորդը նրանցից պահանջել է տարբեր չափերի գումարներ: Որպես տարանցիկ երկիր նրանցից 5-ը նշել են Թուրքիան, իսկ մեկը՝ Մեքսիկան:

Հարցման մասնակիցներից մեկի խոսքերով արտասահմանում շահութաբեր աշխատանք ունենալու խոստումների փոխարեն իրականում այնտեղ ստիպված է եղել զբաղվելու մարմնավաճառությամբ, մեկի նկատմամբ կիրառվել է շանտաժ, չորսն ընկել են պարտքերի տակ, 5-ը ենթարկվել են ֆիզիկական շահագործման, քանի որ այնտեղ առանց վարձատրվելու օրական աշխատել են 16 ժամ և ավելի:

Պահանջները չկատարելու դեպքում հարցման մասնակիցներից մեկին գործատերը/ միջնորդը երբեմն ենթարկել է բռնության, սպառնացել ու արգելել է օգտվել հեռախոսից: Վիճակից դուրս գալու համար նույնիսկ փորձել է փախչել: Այդ հարցում նրան օգնել են ընկերները: Հարցման մասնակիցներից 6-ը, գնահատելով իրենց առողջական վիճակը, նշել են, որ այն վատթարացել է, քանի որ ապրել են ոչ նորմալ սանիտարահիգիենիկ պայմաններում:

Հարկ եղած դեպքում այդ երկրներում գործող իրավապաշտպան կազմակերպություններին դիմելու համար դրանց հասցեներն ու հեռախոսահամարները չի իմացել հարցման մասնակիցների 67%-ը: Հարցման մասնակիցներից 2-ը նշել են, որ չեն ցանկացել վերադառնալ Հայաստան, քանի որ վախենում են հետապնդումից: Մեկը նշել է, որ վախենում է, որ ընտանիքը չի ընդունի, 6-ը նշել են, որ վերադարձի համար տոմսի գումար չունեն:

ԳԼՈՒԽ 3. ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԱՌԱՋԱՐԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ

3.1 Եզրակացություններ

Հետազոտության արդյունքները ցույց տվեցին, որ մանկատների և հատուկ դպրոցների երեխաները և դրանց շրջանավարտները սոցիալապես անապահով, միա-կողմանի և երկկողմանի ծնողազուրկ, բազմազավակ և չքավոր ընտանիքներից են:

Այդ ընտանիքները, գտնվելով ծայրահեղ աղքատության վիճակում, բախվում են սոցիալական այնպիսի կարևոր հիմնախնդիրների հետ, ինչպիսիք ընտանիքի ցածր եկամուտներն են, գործազրկությունը, երեխաներին սնունդով, հագուստով ապահովելը, կրթության, առողջապահության հետ կապված ծախսերի անմատչելիությունը: Այդ հանգամանքները հասարակության մեջ նրանց դարձնում են թրաֆիքինգի համար ռիսկային խումբ, իսկ պետությունը և շահագրգիռ կազմակերպությունները իրենց հետագա գործողությունները և ջանքերը պետք է նպատակաուղղեն հանրապետությունից նրանց վանող գործոնները հաղթահարելու համար: Այդ գործոնների հետևանքով նրանց որոշ մասը իր ապագան չի տեսնում Հայաստանում և ցանկություն է հայտնել մեկնել հանրապետությունից: Նրանց ապագայի ծրագրերում գերիշխում են միգրացիոն տրամադրությունները: Վերոհիշյալ ռիսկային խմբից հետագայում պատրաստվում են մեկնել Ռուսաստանի Դաշնություն, ԱՄՆ, Ֆրանսիա, Գերմանիա, Լեհաստան, Հոլանդիա, Հունաստան: Միգրացիոն կողմնորոշումներ ունեցող հարցման մասնակիցների մեծ մասը բոլորովին ծանոթ չէ այդ պետություններում գործող միգրացիոն ռեժիմներին, ինչը հետագայում թրաֆիքինգի ենթարկվելու առումով նրանց դարձնում է առավել խոցելի:

Մանկատների և հատուկ դպրոցների աշակերտների և շրջանավարտների շրջանում թրաֆիքինգի մասին իրազեկության վերաբերյալ հետազոտության արդյունքները այնքան էլ հուսադրող չեն, քանի որ խնդրո առարկայի վերաբերյալ նրանց տեղեկացվածությունը դեռևս ցածր է:

Հայաստանի Հանրապետությունը մշակել է թրաֆիքինգի դեմ պայքարի գործողությունների ազգային ծրագիր, բայց պետությունը բնակչության շրջանում իրազեկության բարձրացման համար դեռևս արդյունավետ ձևով չի կազմակերպում հանրային տեղեկատվական արշավներ:

Պետության և համապատասխան շահագրգիռ կազմակերպությունների համար լուրջ անհանգստության և մտորումների տեղիք պետք է տան հարցման մասնակիցների կողմից մանկատներում և հատուկ դպրոցների աշակերտների և շրջանավարտների շրջանում թրաֆիքինգի վերաբերյալ ներկայացված մի շարք պատմություններն ու օրինակները, ԱՄՆ-ում և Հունաստանում գտնվող

Հայաստանի քաղաքացիների շրջանում հետազոտության արդյունքներով բացահայտված նմանատիպ դեպքերը:

3.2 Առաջարկություններ

Հետազոտության արդյունքները թույլ են տալիս կատարելու մի շարք առաջարկություններ՝ Հայաստանի Հանրապետության մանկատների և հատուկ դպրոցների աշակերտների և շրջանավարտների անօրինական փոխադրումները կանխարգելելու նպատակով: Թրաֆիքինգի կանխարգելման գործում առավել ակտիվ է Հայաստանի հասարակական կազմակերպությունների սեկտորը, որը հիմնականում միջազգային դրամաշնորհների միջոցներով շահառու խմբերի շրջանում կազմակերպում է միջոցառումներ, բայց ռեսուրսները և հնարավորությունները դեռևս շատ սահմանափակ են, և մարդիկ քիչ են ընդգրկված այդ ինստիտուցիոնալ կառույցներում: Պետությունը ֆոնդերի և դրամաշնորհների միջոցով պետք է աջակցի հասարակական կազմակերպություններին՝ այդ ոլորտում կանխարգելման և աջակցության ծրագրեր իրականացնելու գործում:

3.2.1 Իրազեկության բարձրացում

Իրազեկության բարձրացումը դպրոցական ծրագրում. Մանկատների և հատուկ դպրոցների աշակերտների շրջանում թրաֆիքինգի վերաբերյալ իրազեկության բարձրացման գործում դեռևս բավարար չէ ուսուցիչների կատարած դերը: Որպեսզի ուսուցիչները դառնան թրաֆիքինգի վերաբերյալ կարծիք ձևավորողներ և կանխարգելման համար կարևոր ռեսուրս, անհրաժեշտ է կատարել նրանց կարիքների բավարարմանն ուղղված մի շարք միջոցառումներ: Այդ կապակցությամբ իր դերակատարումը պետք է ունենա նաև ՀՀ կրթության և գիտության նախարարությունը հետևյալ առումներով. դպրոցական ծրագրերում, մասնավորապես «Մարդու իրավունքներ» դասընթացում, ընդգրկել թրաֆիքինգի՝ մարդկանց անօրինական փոխադրումների և վաճառքի վերաբերյալ առանձին թեմա: Ուսուցիչների շրջանում այդ խնդիրը դարձնել առանձին մտահոգության առարկա և այդ թեմաներով նրանց համար կազմակերպել դասընթացներ, սեմինարներ և քննարկումներ: Երեխաների և ուսուցիչների շրջանում իրազեկության բարձրացման առումով կարևոր նշանակություն կարող է ունենալ այդ հաստատությունների գրադարանների ապահովումը թրաֆիքինգի վերաբերյալ համապատասխան գրականությամբ և նյութերով:

Իրազեկության ընդհանուր բարձրացումը. Հետազոտության արդյունքները ցույց տվեցին, որ մանկատներում և հատուկ դպրոցների աշակերտների և շրջանավարտների շրջանում դեռևս ցածր է մարդկանց անօրինական փոխադրումների վերաբերյալ իրազեկությունը: Խնդրի լուծման համար առաջարկվում է վերոհիշյալ թիրախ խմբերի շրջանում տեղեկատվության բարձրացման նպատակով նախաձեռնել արշավներ և միջոցառումներ, իրազեկել ապօրինի փոխադրումների, ինչպես նաև թրաֆիքինգի զոհ դառնալու պատճառների ու հետևանքների մասին: Տեղեկացվածության բարձրացման առումով որոշակի դեր պետք է վերապահել ՁԼՄ-ներին: Հարցման արդյունքներով այդ խմբերի շրջանում տեղեկատվության հիմնական և վստահելի աղբյուրը դեռևս մնում է հեռուստատեսությունը:

Մարդկանց ապօրինի փոխադրումների վերաբերյալ տեղեկացվածությունը առավել ցածր է մարզերում գտնվող վերոնշյալ հաստատությունների աշակերտների և շրջանավարտների շրջանում, ինչը պայմանավորված է հեռուստատեսության ալիքների հիմնական մասի անմատչելիությամբ և անհասանելի լինելու տեխնիկական խնդիրներով: Ելնելով այդ հանգամանքից, շահագրգիռ կազմակերպությունները թրաֆիքինգի խնդիրները լայն քննարկման առարկա պետք է դարձնեն մարզային տեղական հեռուստաընկերությունների միջոցով:

3.2.2 Կանխարգելման միջոցառումներ

Սոցիալական պաշտպանության ընդհանուր միջոցառումները. Իրավական գիտելիքների բարձրացման առումով մանկատների և հատուկ դպրոցների աշակերտներին և շրջանավարտներին հարկավոր է իրազեկել Հայաստանի Հանրապետությունում թրաֆիքինգի վերաբերյալ ստեղծված օրենսդրական դաշտի և գործող օրենքների մասին, ինչի կարիքը, ըստ հետազոտության արդյունքների, առկա է նրանց շրջանում: Նրանց իրավական պաշտպանվածության բարձրացման առումով այդ միջոցառումների կազմակերպումը կարող է ունենալ կարևոր նշանակություն:

Շրջանավարտների զբաղվածության հարցը. Հայաստանի Հանրապետության կառավարությունը ջանքեր պետք է գործադրի մանկատների և հատուկ դպրոցների շրջանավարտների շրջանում արդյունավետ սոցիալական պաշտպանվածության համակարգեր ստեղծելու համար: Մասնավորապես, կառավարությունը պետք է հետևողական լինի մանկատան չափահաս սաների շրջանում գործազուրկների թվի կրճատման և նրանց համար նոր աշխատատեղերի ստեղծման հարցում: Հանրապետության խոշոր գործատուները պետք է ցուցաբերեն ցանկություն և մանկատների տնօրինության հետ կնքեն

պայմանագրեր, ինչպես նաև ամեն տարի իրենց ձեռնարկություններում աշխատատեղեր հատկացնեն նրանց:

Շրջանավարտների բնակարանային հարցերի լուծումը. Կառավարությունը պետք է օրենսդրորեն ամրապնդի մանկատան սաներին հետագայում բնակարանով ապահովելու հարցը և գտնի ֆինանսական ռեսուրսներ՝ այդ խնդրի կարգավորման համար: Նման լուծումը կարող է մեղմել թրաֆիքինգի ենթարկվելու ռիսկերը:

Երեխաների խնամք իրականացնող հաստատությունների վերահսկումը. Երեխայի շահագործման կանխարգելման ու դրա դեմ պայքարին ուղղված ջանքերը Հայաստանում խիստ անհրաժեշտ են և կարևոր միջոցառում կարող են լինել թրաֆիքինգի առաջնային պատճառները վերացնելու գործում: Նաև լրացուցիչ միջոցներ պետք է ձեռնարկել ձեռք բերված հաջողությունները ամրապնդելու և հետընթացը բացառելու համար: Առաջարկվում է իրականացնել երեխաների խնամք իրականացնող հաստատությունների պարտադիր պարբերական վերահսկում, որը դրականորեն կազդի այս հաստատություններում երեխաների շահագործման կանխարգելման վրա:

Հասարակական Կազմակերպություններ. Թրաֆիքինգի կանխարգելման գործում առավել ակտիվ է Հայաստանի հասարակական կազմակերպությունների սեկտորը, որը հիմնականում միջազգային դրամաշնորհների միջոցներով շահառու խմբերի շրջանում կազմակերպում է միջոցառումներ, բայց նրա ռեսուրսները և հնարավորությունները դեռևս շատ սահմանափակ են, և մարդիկ քիչ են ընդգրկված այդ ինստիտուցիոնալ կառույցներում: Պետությունը ֆոնդերի և դրամաշնորհների միջոցով պետք է աջակցի հասարակական կազմակերպություններին՝ այդ ոլորտում կանխարգելման և աջակցության ծրագրեր իրականացնելու գործում:

3.2.3 Միջգերատեսչական մարմիններ

Թրաֆիքինգի կանխարգելման ցանց. Անհրաժեշտ է երեխաների շրջանում թրաֆիքինգի կանխարգելման նպատակով ստեղծել միջգերատեսչական ցանցեր: Միջգերատեսչական ցանցում կարևոր օղակ կարող է դառնալ առողջապահական, հոգեբանական ծառայությունների, սոցիալական աշխատանքի, դատաիրավական ոլորտի միասնական համակարգված գործունեությունը: Այդ կառույցներում անհրաժեշտ է թրաֆիքինգի կանխարգելման և տուժածների պաշտպանության և աջակցության համար ստեղծել համատեղ մասնագիտացված խմբեր: Նրանք պետք է պարբերաբար այցելություններ կատարեն մանկատներ և հատուկ դպրոցներ՝ կանխարգելման աշխատանքներ կատարելու:

Թրաֆիքինգի եւ բռնությունների կանխարգելման հարցերով ուսուցում. Մասնագիտական ուսուցումներ պետք է անցկացվեն բժիշկների, հոգեբանների, սոցիալական աշխատողների և դատաիրավական համակարգի որոշ օղակների

մասնագետների համար, ինչը հնարավորություն կտա բարձրացնելու նրանց տեղեկացվածությունը կավատների, երեխաներին անօրինական գործողությունների մեջ ներգրավելու, երեխաների նկատմամբ կատարվող բռնությունների վերաբերյալ և կոնկրետ աջակցություն ցուցաբերելու հարցերով: Ուսուցումների ընթացքում ուշադրության ծիրում պետք է պահել թրաֆիքինգի զոհերի խնդիրը: Նրանց մոտ պետք է ձևավորել այն գիտակցությունը, որ զոհերը ոչ թե անօրինական միգրանտներ և հանցագործներ են, այլ ոտնահարված իրավունքներով տուժյալներ:

3.2.4 Իրավական բարեփոխումներ

Փոխհատուցում զոհերին. Պետությունը պետք է աջակցի թրաֆիքինգի զոհերին՝ համապատասխան արտոնություններով որոշակի կարգավիճակ տալով առողջապահական, սոցիալական, իրավական ծառայություններից օգտվելու համար:

Անհրաժեշտ է մշակել հստակ մեթոդոլոգիա և չափանիշներ՝ «թրաֆիքինգի զոհ» հասկացության սահմանման համար: Քրեական օրենսգրքում թրաֆիքինգի հարցով ամրագրված պատժամիջոցները բավարար չափով արդյունավետ և համոզիչ չեն: Առաջարկվում է, որպեսզի Քրեական Դատավարության Օրենսգրքում փոփոխություն կատարվի՝ ավելացնելով հանցագործության հետևանքով ստացված եկամտի կամ միջոցների բռնագրավման դրույթը՝ որպես մարդկանց թրաֆիքինգի ենթարկելու համար պատժամիջոց: Այդ բռնագրավված միջոցները պետք է օգտագործվեն ի շահ թրաֆիքինգի զոհերի: Կարևորություն պետք է տրվի զոհերի փոխհատուցման հիմնադրամի ստեղծմանը, որը մասամբ կֆինանսավորվի բռնագրավված միջոցների հաշվին:

Քրեական պատժամիջոց. Ելնելով միջազգայնորեն ընդունված մոտեցումներից (թեև միջազգային ստանդարտները չեն նախատեսում, թե ինչպիսին պետք է լինի նվազագույն պատիժը)՝ առաջարկվում է վերանայել քրեական պատժամիջոցների չափի մեծացման հնարավորությունը, ինչպես նաև անհրաժեշտ մեխանիզմների ավելացումը՝ օրենքի առջև առավել մեծ պատասխանատվության կանչելու համար:

Մանկական պոռնոգրաֆիայի քրեականացում. Դեռևս գործ կա անելու մանկական պոռնոգրաֆիան քրեականացնելու ուղղությամբ: Առաջարկվում է քրեական օրենսդրությունը վերափոխել այնպես, որ այնտեղ տեղ գտնի «մանկական պոռնոգրաֆիա» հասկացության սահմանումը, ինչպես նաև մանկական պոռնոգրաֆիա ձեռք բերելն ու պահելը ամրագրվեն որպես քրեական հանցանքներ:

Վկայի պաշտպանություն. Առաջարկվում է փոփոխություն կատարել Քրեական օրենսգրքում՝ ավելացնելով վկայի պաշտպանության վերաբերյալ մի

քանի մշակված դրույթներ, որոնց նպատակն է պաշտպանել զոհին/վկային հանցագործի հետ դեմ առ դեմ հանդիպումից, ինչպես նաև ապահովել նրանց մասին տվյալների գաղտնիությունը:

Արտերկրում որդեգրման դեպքում հնարավոր շահագործման դեմ ընթացակարգային երաշխիքներ. Որդեգրումից հետո շահագործման ու երեխայի իրավունքների ոտնահարման դեմ իրավական երաշխիքները պետք է բարելավվեն: Առաջարկվում է, որ ՀՀ իշխանությունները լրջորեն մտածեն «Երեխաների պաշտպանության և արտերկրում որդեգրման դեպքում համագործակցության մասին» Հաագայի կոնվենցիային Հայաստանի միանալու մասին, քանի որ այն կնպաստի, որպեսզի երեխաները օգտվեն արտերկրում որդեգրման դեպքում հնարավոր շահագործման դեմ ընթացակարգային երաշխիքներից: Նաև ցանկալի է, որպեսզի ապօրինի որդեգրումն ամրագրվի որպես քրեական հանցանք:

Հավելված Ա

Ընտրանք
«Թրաֆիքինգի մասին իրազեկության աստիճանի ուսումնասիրություն Հայաստանի մանկատներում և հատուկ դպրոցներում» հետազոտության
Հարցման մասնակիցների թիվը՝ ըստ մարզերի

Հարցաթերթիկ 1		
Մանկատների և հատուկ դպրոցների աշակերտներ		
1	Արագածոտն	
2	Արարատ	
3	Արմավիր	
4	Գեղարքունիք	54
5	Լոռի	248
6	Կոտայք	59
7	Շիրակ	309
8	Սյունիք	170
9	Վայոց ձոր	
10	Տավուշ	
11	Երևան	434
	Ընդամենը	1274

Հարցաթերթ 2		
Մանկատների և հատուկ դպրոցների շրջանավարտներ		
1	Արագածոտն	1
2	Արարատ	
3	Արմավիր	2
4	Գեղարքունիք	17
5	Լոռի	41
6	Կոտայք	
7	Շիրակ	73
8	Սյունիք	19
9	Վայոց ձոր	
10	Տավուշ	
11	Երևան	136
	Ընդամենը	289
Հարցաթերթիկ 3		
Մանկատների և հատուկ դպրոցների ուսուցիչներ		
1	Արագածոտն	
2	Արարատ	
3	Արմավիր	
4	Գեղարքունիք	3
5	Լոռի	20
6	Կոտայք	
7	Շիրակ	37
8	Սյունիք	10

9	Վայոց ձոր	
10	Տավուշ	
11	Երևան	55
	Ընդամենը	125

Հարցաթերթիկ 4		
Մանկատների և հատուկ դպրոցների երեխաների ընտանիքներ		
1	Արագածոտն	
2	Արարատ	
3	Արմավիր	1
4	Գեղարքունիք	9
5	Լոռի	35
6	Կոտայք	
7	Շիրակ	69
8	Սյունիք	19
9	Վայոց ձոր	1
10	Տավուշ	
11	Երևան	101
	Ընդամենը	235

Հարցաթերթիկ 5		
Փորձագետներ		
1	Արագածոտն	
2	Արարատ	
3	Արմավիր	
4	Գեղարքունիք	7
5	Լոռի	7
6	Կոտայք	
7	Շիրակ	8
8	Սյունիք	12
9	Վայոց ձոր	
10	Տավուշ	
11	Երևան	23
	Ընդամենը	57

Հարցաթերթիկ 6		
Արտագաղթածներ		
1	Հունաստան	60
2	ԱՄՆ	34
	Ընդամենը	94